


ԴԱՍԱԳՐՔԵՐ ՀՅՈՒԽԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱԾԻ ԳԳՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՃԻԱՐՀԵՎՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԵՐՔԻ ԳԻՐՔ

ՈՒՄԲԱ ԸՐՐՈՐ ՅՈՒՐ

ՎԻԲԼԻՈՒՐ
ԻՆՍԻՏՈՒՏԱ
ՎՈՏՈԽՈՎԵԴԵՆԻ
Ակադեմիա Խուս
СССР



91(075)
4-50

ՀՐԱՄԱՐՈԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒԽԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱԾ»

1932

ՊՈԽՏՈՎ-ԴՈՒ

91(675)
4-50

ԳՈՅԱԿԱՐՔԵՐ ՀՅՈՒՍԻՍՈՅԻՆ ԿՈՎԿՈՒ ԴՊՐՈՑԵՐԻ ՀՅՈՒՍԻ

Հ-5 002 2011 32-M
A 89

ՍԻՄՈՆՈՎ, ՖՅՈԴՈՐՈՎ, ԶԵՐՆՈՎ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ

ՈՒՍՄԱԿ 33 ՏԱՐԻ


Թագդ. Գ. Գևորգյանի



ՀՈՐԻԶՈՆԵ ՅԵՎ ՆՐԱ ԿՈՂՄԵՐԸ

Ցերբ դաշտում կանգնած դիտում եք ձեր չորս կողմը, դուք տեսնում եք ամենահեռավոր առարկաներն ու տեղերը՝ անտառը, հարևան գյուղերը և բարձրությունները։ Սրանց հետեւ վոչինչ չել յերևում։ Ճեզ թվում ե, վոր դրանք գտնվում են յերկրի ծայրին։ Ցերբ դուք փորձում եք հասնել այդ ծայրը, պարզ-վում ե, վոր յերկիրը ծայր չունի. անտառի և բարձրության հետեւ հեռվում նորից տեսնում եք դաշտեր, գյուղեր և անտառներ, իսկ դրանց հետեւ—կրկին յերկրի ծայրը։ Չեզ նորից թվում ե, վոր յերկինքը միանում է յերկրին։ Բարձրանում եք ելեկատորի աշտարակը և դարձյալ նույն եք նկատում։ Հետ եք դառնում, դիտում եք ձեր շուրջը. ամեն տեղ տեսնում եք նույն դիմում, թվում ե ճեզ, վոր յերկինքը միանում է յերկրին։

Նկ. 1. Հորիզոն



Այդ դիմում կոչվում ե հորիզոն։

Դիտելով արևը դուք նկատում եք, վոր նա բարձրանալով հորիզոնի վրա, բարձրանում ե ավելի վեր ու վեր և կեսորին, ժամը 12-ին հասնում ե ամենաբարձր զրության յերկնակամարի վրա։

Կեսորից հետո արեգակն սկսում ե ավելի և ավելի ցած իջնել, մինչեւ վոր չի ծածկվում հորիզոնի հետեւում։ Հորիզոնի այն կողմը, ուր արեգակը գտնվում է կեսորին, կոչվում ե հարավ, զրա դիմաց գտնվող հորիզոնի կողմ՝ հյուսիս։ Ցեթեւ ուղիղ դիմ անցկացնենք հյուսիսից դեպի հարավ, արեգակի ճառագայթները կեսորին սրա հետ կլինեն մի ուղղությամբ։ Այդպիսի դիմը, վորի մի ծայրն ուղղված ե դեպի հյուսիս, իսկ մյուսը՝ դեպի հարավ, կոչվում ե միջորեյի դիմ։

Իմանալով, թե վոր կողմումն ե գտնվում. հյուսիսը կամ հարավը, հեշտ ե վորոշել հորիզոնի մյուս կողմերը՝ արեվելքն ու արեվմուտը։

Ցեթեւ յերեսներդ դարձնեք դեպի հյուսիս, աջ կողմը կլինի արևելք, ձախ կողմը՝ արևմուտք։




61383-67g



КНИГОИЗДАТЕЛЬСТВО
„СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

Արևի ծագելն ու մայր մտնելն ևս կարող ե իրրև միջոց ծառայել հորիզոնի կողմերը վորոշելու համար: Արևը ծագում ե արևելքում և մայր ե մտնում արևմուտքում:



Կ. 2. Արեգակի ուղին

ԱՇԽԱՏԱՆՔ.


Արև որ, առավոտյան ժամը 9—10-ին ընտրեցէք մի հարթ և պոչ ստվերոտ հրապարակ, այդտեղ տնկեցէք մի ձող: Ձողը տնկեցէք այնպես, վոր կանգնի ուղղահայց: Ձողից գետնի վրա կտացվի ստվեր:

Վերցրեք մի թել, նրա մի ծայրը կապեք ձողից, յերկրորդ աղատ ծայրին ամրացրեք մի սուր փայտի կտոր կամ գամ: Ձգելով թելը, այդ փայտի կամ գամի միջոցով . շրջան գծեցեք: Այժմ շրջանի այն տեղում, ուր գտնվում է ստվերի ծայրը, նշան արեք և անկեցեք մի ուրիշ, ավելի կարճ ձող: Ցերեկվա ժամը 2—3-ին ձողի ստվերի ծայրը կը կին կը նկնի շրջանի վրա, բայց արդեն հակառակ կողմից: Այդտեղ ևս ձող տնկեցէք: Ձողերը միացրեք գծով, վերջինս բաժանեցեք յերկու հավասար մասերի և միջտեղում նորից մի ձող տնկեցեք: Գլխավոր և միջտեղի ձողերը միացրեք գծով: Այդ գիծը գալու յե հյուսիսից (մեջտեղի ձողից) դեպի հարավ (գլխավոր ձողի մոտ): Դա միջորելի գիծն ե:

ՀԱՐՑԵՐ

Ձողի ամենակարճ ստվերն որվա վճր ժամին ե լինում:

Ամպամած յեղանակին ձողի միջոցով կարելի յե վորոշել միջորեյի գիծը, հորիզոնի կողմերը:



Կ. 4. Ենթակա յեվ կարձ գծերվ միջարեյի գծի վարչելը

Ի՞նչն ե պատճառը, վոր տների պատերը, պարիսպները ներքեց հյուսիսային կողմից խոնավ են լինում, իսկ հարավային կողմից՝ չոր:

Այդ նշաններով ոգտվելով կարելի յե վորոշել հորիզոնի կողմերը:

ԻՆՉՊԵՍ ՎՈՐՈՇԵԼ ՀՈՐԻԶՈՆԻ ԿՈՂՄԵՐԸ ԳԻՇԵՐԸ

Հաճախ պետք ե լինում վորոշել հորիզոնի կողմերը գիշերը, բայց գիշերն արև չի լինում: Այդ գիշերում դիմում ենք ստվերի ոգնության:

Պետք ե գտնել հյուսիսային բևեռային աստղը, նա միշտ գտնվում ե հյուսիսայում: Մեզ պետք ե իմանալ միայն հորիզոնի մի կողմր, մյուսները հեշտ ե գտնել: Թիշերը յերկնքում վառվում են հազարավոր մեծ և փոքր աստղեր:

Վերը ե գրանցից բևեռային աստղը: Ճա-

նապարհը դեպի այդ աստղը կգտնենք մեծ յել փոքր արջ համաստերության միջոցով:

Ստվերի այդ խմբերումն ե գտնվում բևեռային աստղը: Յերեսներդ գարձրեք գիշերի աստղը. աջ կողմում կլինի արենելը, ձախ կողմում՝ արևմուտքը: Այսպիսով գիշերով ել կարելի յե վորոշել հորիզոնի կողմերը:

ԱՇԽԱՏԱՆՔ

Կ. 5. Մեծ յեվ փոքր արջ համա-

ռեշադրությամբ դիտեք նկարի վրա աստ-

ղերի գառավորությունը և տետրում նկարեք:

Հիշելով մեծ և փոքր արջ համաստեղության աստղերի և բեվեռային աստ-

ղի դասավորությունը, գտեք նրանց յերեկոյան յերկնքում:

Դանելով հյուսիսային բևեռային աստղը, վորոշեցեք հորիզոնի կողմերը:

ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ

Արև որ և աստղոտ գիշեր միշտ չի լինում, փշեց քամին, յերկինքը ծածկվեց մութ ամպերով, և վոչ արեգակ ե յերեւում և վոչ ել աստղեր: Դեկավար նավի վրա, ոգաչուն ինքնաթիւի վրա, հողաչափը դաշտում պետք ե ները

իմանան հորիզոնի կողմերը. Նրանք չեն կարող սպասել, մինչև վոր պարզ որ լինի: Մեզ ծանոթ միջոցներով ճիշտ վորոշել հորիզոնի կողմերը հնարավոր չեն: Այդ բանին ոգնության ե գալիս կողմնացույցը:


ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վերցը կողմացույցը և անսկզ, թե ինչպես ենա շինված, ինչ մասերից են կազմված և այդ մասերից յուրաքանչյուրն ինչ դեր են խաղում:


Կողմնացույցի գլխավոր մասն ե կազմում մագնիսական սլաքը: Նա հեշտությամբ շարժվում ե ասեղի կամ գնդասեղի նման սրածայր հենարանի վրա: Այդ սլաքի մի ծայրը նայում ե դեպի հյուսիս, մյուսը՝ դեպի հարավ: Շարժեք կողմնացույցը, սլաքը հետ ու առաջ կշարժվի և կրկին կրնդունի առաջվա դրությունը — սկացրած ծայրով դեպի հյուսիս, մյուսով՝ հարավ: Այդ անհրաժեշտ ե ողաչույին, նավապետին, ճանապարհորդին, հողաչափին, ինժեներին, տուրիստներին իրենց աշխատանքների ժամանակ և պիոներներին — պիոներ-արշավիների ժամանակ:

ԱՇԽԱՏԱՆՔ

Յեթե ձեռքի տակ ունեք մադ-
նիսական ձողիկ, հեշտությամբ կարող
եք ինքններդ կողմնացույց շինել: Վեր-
ցրեք այդ մագնիսական ձողիկը, նրա
մեջտեղից մի թել կապեք և թելի
մյուս աղատ ծայրից բռնելով, կախ
տվեք: Զողիկը, հետ ու առաջ շար-
ժեւելով, կանգ կառնի՝ մի ծարուռ ուժակ



Նկ. 6. Կողմնացու।



Նկ. 8. Ծովային կողմնացույց

Նշանակություն չունի, յեթե ձեր մագնիսը պայտածել լինի. այդ դեպքում վերցրեք մի մեծ ասեղ և քսեք մագնիսին, ինչպես ցույց ե տրված նկարի վրա, ապա դրեք այնպես, վոր նա կարողանա աղատ շրթվել:

Սյու անելը դժվար չե: Թելի փոխարեն կարելի յե վերջնել ջրով լիքը բաժակի պնակ և խցան: Ասեղը գրեք խցանի վրա և բաց թողնել ջրի մակերեսին: Ասեղով խցանը շարժվելով կանգ կառնի և ասեղի ծայրերով ցույց կտա հյուսիս և հարավ կողմերը: Լուցկին խաչաձև դրեք խցանի վրա, կամ մտցրեք նրա մեջ: Նա իր ծայրերով ցույց կտա արևելք և արևմուտք: Սյուպես և շինված կողմանացույցը, վորով ոգտվում են ողաչուները, նաև կավար-


Ասեղի փոխարեն լողան ունեցող այդպիսի կողմնացույցը կոչվում է ները։ Ասեղի փոխարեն լողան ունեցող այդպիսի կողմնացույցը կոչվում է ծովային կօդմնացույց։

Ի՞նչ տարբերություն կա հասարակ և ծովային կողմնացույցների մեջ։
Ի՞նչպիսի աշխատանքների ժամանակ և անհրաժեշտ կողմնացույցը։
Ի՞նչուրեք պետք կողմնացույցը կարմիր բանակի հրամանատարին։

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՈԳՏՎՈՒՄ ԿՈՂՄԱՑՈՒՅՑՈՎ

Ժամը 12-ին Մոսկվայից Ռուստով հասավ ինքնաթիռը «ՊրաՎդա» Թերթի մատրիցներով (մատրիցա—լատիներեն բառ ե, վոր նշանակում ե պատրաստի ձևեր, վորոնց մեջ մետաղից ձուլում են թերթի յերեսները. այդ մետաղյա յերեսներով տպվում ե թերթը): Մատրիցների մի մասը ինքնաթիռը պետք է փոխադրի Գրողնիյ քաղաքը:

կես ժամից հետո ինքնաթիւն արդեն գտնվում ե զեպի Գրողնիյ տանող ողային ճանապարհին։ Առույգ աղմկում ե մոտորը. թերի միջև յեղած տա-



Նկ. 9. Թուքչիք սիեմատիկ բարեկզր: Ամպի օնրաը. ինքնաթիռը խոօսրացրած կօղմնացույցով
բածության մեջ սուլում ե քամին: Ներքեռում լողում—անցնում են գյուղերը,
մարգագետիններն ու անտառները: Փայլում ե վոլորապտույտ յերկաթուղին:
Ինքնաթիռի տակից արագ անցնում են՝ Տիխորեցկը, Կրոպոտկինը, Արմա-
վիրը: Ներքեռում տարածվել են Հանքային ջրերը: Առջևում հորիզոնը ծածկը-
ված ե ամպերով: Հանքային ջրերն անցնելուց հետո ինքնաթիռն ընկնում է
խիտ ամպերի մեջ: Աշքից ծածկվել են՝ գետերը, ճանապարհը, գյուղերը, ա-
մեն ինչ ծածկվել ե կաթնանման ամպերով:

իջնել չփառվածաւ ուղիւր իջնել կարելի, իսկ Գրոզնիյի նավթագործներն այսոր պիտի կարդան «Պրագդա» թերթը: Ողաչույին ազատում ե կողմնացույցը: Ողաչուն գիտե, վոր թռչելով Խոստովից նա ուղղություն պիտի բռնի դեպի հարավ-արևելք-ուրեմն նա այսպես պիտի թռչի, վոր կողմնացույցի լողանի վրա գտնվող Հ—Ա գիծը զուգասեհակի հնճնաթիւնի թռիչքի ուղղությանը:

Ինքնաթիոփ ճանապարհից ամենաչնչին կերպով թեքվելն անգամ հայտաբերվում ե. կողմանացուցի միջոցով. Ոդաշուն կանոնավորում ե ինքնաթիոր և շարունակում թոփչը սլաքի Հ—Ա. ուղղությամբ:

Ասցնում ե կես կամ մեկ ժամ: Ժամանակին նայած, պետք ե շուտով հասնեն Գրողներ: Ամպն սկսում ե նոսրանալ և յերկնքի ամպերի ազատ մասերից փայլում ե արեր: Հետզհետե սկսում ե յերևալ գետինը. հեռվից արդեն յերեսում ե Գրողնին: Ներքեսում այերբողբոն ե. դրված են ճանապարհորդ առնելու նշանները: Ինքնաթիւր մեղմ իշնում ե և հասնում իր ժա-

մանակին: Մատրիցները տեղափորում են ապագրատան ավտոմորիներում, իսկ կես ժամից հետո մեքենայի տակ պառկում են արդեն «Պրավդա» թերթի նորատիպ եջերը:

Նայեք ինքնաթիռի ուղին նկարի վրա:

ՊԼԱՆ

Աշնանը բանջարանոցում հավաքում են բանջարեղենը: Զմեռը հասնելուն պիս վերջանում են բանջարանոցներում աշխատանքները: Գարնանը բանջարանոցներում աշխատանքները վերսկսվում են: Նորից վարում են, մարգեր կապում, ջրելու համար առուներ շինում, ցանում: Բայց ձմեռը, յերբ բանջարանոցը ձյունի տակն ելինելու, նրա մասին չեն մոռանալու. կաղմվելու յե ցանքսի պլանը, փորոշվելու յեն հողամասեր առանձին մշակույթների համար: Իսկ ինչպես բանջարանոցը մասերի բաժանել, յերբ նա ձյունի տակն եւ նրա համար կարիք չկա բանջարանոց գնալու, այլ բավական եռունենալ միայն նրա պլանը: Պլանը—դա մի գծագիր նկար եւ, փորի շորհիվ կարելի յե փորոշել բանջարանոցի յերկարությունն ու լայնությունը: իմանալ, թե վհրքան նեռու յեն գտնվում մարգերը ջրհան մեքենայից, ազարակից:

Այսոր մենք ունենալու յենք մաթեմատիկայի և աշխարհագրության դասեր. պարագմունքներն անցկացնելու յենք բանջարանոցում: Կոլտնտեսության համար կազմելու յենք կոլտնտեսային բանջարանոցի հինգերորդ հողամասի պլանը: Աշխատանքն սկսելու յենք բանջարանոցի մեծությունը պարզելով: Մետրով չափում ենք նրա յերկարությունն ու լայնությունը. գրում ենք՝ յերկարությունը—100 մետր, լայնությունը—80 մետր: Կարելի յե թղթի վրա ձևակերպել այդպիսի մեծությունն: Կարելի լե, բայց դրա համար շատ թուղթ կպահանջվի: Մեկ այդպիսի մեծապլան պետք ել չի. այդպիսի մեծ պլան քննելն ել անհարմար ե. ավելի նպատակահարմար ե, փոր նրա մեծությունը հավասար լինի տեսքի թերթին: Տեսքը 80 մետր լայնություն չունի, ուրեմն բանջարանոցի պլանը նկարում ենք փոքրացրած:

Պայմանագրվենք, վոր բանջարանոցի չափերը մեր նկարում լինելու յեն իսկական չափերից 1000 անգամ փոքր:

Մեր պլանի 1 սանտիմետրում լինելու յե բանջարանոցի 10 մետրը: Դա հասկանալի կդառնա, իթե հիշենք, վոր մետրն ունի 100 սանտիմետր, իսկ 10 մետրը—1000 սանտիմետր: Այդ 1000 սանտիմետրը մեր պլանում նշանակված են 1 սանտիմետրով:


Այն չափը, վոր ցույց ե տալիս, թե պլանում յեղած չափերը բանի անգամ են փոքրացրած իսկականից, կոչվում ե—մասշտաբ:

Վորոշելով մասշտաբը, անցնում ենք պլանի աշխատանքներին: Բանջարանոցի ություն մետրանոց լայնությունը պլանի վրա ներկայացնում ենք 8-ը սանտիմետրով: 100 մետր յերկարությունը ներկայացնում ենք 10-ը սանտիմետր յերկարության գծով: Ապա չափում ենք, թե քանի մետր ե բանջարանոցի ցանկապատից մինչև ջրհան մեքենան և մասշտաբով նշանակում ենք պլանում:

Նույն ձևով չափում ենք և նշանակում պլանում ջրաբաշխիչի, խողովակի, մարգերի, ջերմոցների տեղադրությունը: Նշանակում ենք բանջարանոցի վերջին մանրամասնությունները: Պլանը պատրաստ եւ:

Այժմ բանջարանոցի աշխատողը, ջրաբաշխիչից մինչև ամենավերջին մարգի հեռավորությունը փորոշելու համար կարիք չի ունենա վազելու բան:

Հարանոց: Ստացված սանտիմետրների քանակը ցույց ե տալու տասնյակ մետրներ: Որինակ՝ պլանում նշանակված ե 3 սմ., ուրեմն բանջարանոցում դրան համապատասխանելու յե—30 մետր:



Նկ. 10. Բանջարանոցի պլանը

Այսպես են կազմվում պլանները: Մեր պլանում ցույց են տրված բանջարանոցի և առանձին կառուցվացքների տեղադրությունները, բայց այդտեղ ցույց չե տրված, թե վոր կողմումն ե յուսիսը, հարավը, արևելքն ու արևեմուտքը: Դա ունի մեծ նշանակություն և անհրաժեշտ ե, որինակ՝ ջերմոցների, մարգերի տեղերը փորոշելու համար: Պլանը վերջացնելիս նշանակենք նրա վրա հորիզոնի կողմերը: Դա հնարավոր ե անել կողմացույցի ոգնությամբ: Պետք ե կանգնել բանջարանոցի ցանկապատի մոտ և պլանը բռնել այնպես, վոր ցանկապատը գնա պլանում նշանակված ուղղությամբ: Ապա դնել պլանի վրա կողմացույցը և սլաքի ծայրերի կողքին կետեր գնել: Հյուսիս ցույց տվող սլաքի ծայրի կողքին զրած կետի մոտ զրում ենք հյուսիս, հարավ ցույց տվող սլաքի ծայրի մոտ՝ հարավ: Այդ կետերը միացնում ենք գծով: Կարելի յե նշանակել և սլաքով, վորի սուր ծայրում գրել հյուսիս, մյուս ծայրում՝ հարավ: Այժմ կարող ենք ասել, վոր ռազմական պատրաստ են:

ԱՇԽԱՏԱՆՔ


Բաժանվեցեք խմբերի, սոցմրցում կաղմակերպեք գպրոցի, մատականական մարգերի, պարտիղի, բանջարանոցի ամենալավ պլանը կազմելու համար: Յերբ պլաններն արդեն պատրաստ կլինեն, ստուգեցեք նրանց իրականի հետ համեմատելով, իմացեք ճշշտ հն կաղմական գծով և ստուգական պլանն ե ամենալավ կաղմական: Լավ ե այդ աշխատանքը կատարել մաթեմատիկայի աշխատանքի հետ միասին:

ՁՐԻ ՅԵՎ ՀՈՎԻՑ.

Ամենքդ ել տեսել եք ձորեր: Իսկ գիտեք արդյոք թե ինչպես են գոյացել դրանք: Դա ջրի աշխատանքի հետևանքն է:

Մտաբերենք անձրեկից առաջացած բուռն վտակները: Նկատել եք ալոդյոք, թե նրանք փափուկ հողի վրա ինչպես են առվակներ կազմում: Ամեն մի անձրեկ գալուց հետո այդ առվակներն ավելի ու ավելի լայնանում ու խորանում են: Ջրերը քշում-տանում են առվակի հատակի և կողքերի հողը: Առվակը հետզհետե մեծանում է, դառնում ե առու և ապա՝ ձոր:

Չորերն աճելով մեծ վսասներ են հասցնում գյուղատնտեսությանը: Կտրատելով հողամասերը, մշակելու համար անպետք են դարձնում նրանց: Չորերի դեմ համառ պայքար ե մղվում: Չորի լայնությամբ քարերից և գերաններից մի շարք միջապատեր են շինվում: Այդ միջապատերը դասավորվում են ձորում, ջրի հոսանքով, մեկը մյուսի հետեից: Միջապատերի արանքները լցնում են քարեր և հող: Ստացվում ե աստիճանաձև կառուցվածք:



Նկ. 11. Պայքար ձորերի դեմ.

Այժմ ձորի թեքվածքով հոսող ջուրը՝ չի աղմկում. նա իր հետ չի տանում ձորի հատակի և կողքերի հողը. նա հանդարտ հոսում ե ձորի սահանքներով, ինչպես յելարանի աստիճաններով: Չորի թեք կողքերին ծառեր են տնկում, վորոնք իրենց արմատներով ամրացնում են կողքերը և պաշտպանում հեղեղումների ավերումներից:

Չորը ժամանակին չամրացնելու դեպքում ավելի յե խորանում ու լայնանում: Անձրեկի և ձյան ջրերը քշում-տանում են ձորի հատակի և կողքերի հողը: Այդպիսով կազմվում են այն հեղեղատները, վորոնք շատ են պատահում մեր յերկրամասի տափաստաններում: Հեղեղատը—դա ժայռոտ ափեր չունեցող հին ձորն է:

Չորերի պես են գոյացել և հովիտները: Գետի ջուրը քանդում ե հատակն ու ափերը և տանում հողը: Հաճախ, նայած գետի մակերեսույթի թեքման և հողային տեսակների ամրության, նրա ափերից մեկն ավելի յե հեղեղում ու քայլայլում: Հողը տարվում է, իսկ գետի հունը հետզհետե լայնանում է: Այսպիսով առաջ ե գալիս մի կողմը թեքվածքով մեծ և լայն ակոսաձև խորություն: Հողի մակերույթի վրա գոտնվող այդպիսի խորությունը կոչվում է—հովիտ: Սովորաբար հովառում լինում է մի ուրիշ խորություն, վորի միջով հոսում ե գետը: Այդ խորությունը, վորով հօսում ե գետը, կոչվում ե—հուն:

Մեր յերկրամասում, ուր գետեր կան, որինակ՝ Դոն, Դոնեց, կարող եք գտնել այդպիսի հովիտներ: Յեթե գետի հունը գտնվում է նեղ, թեք զառի-

վայրներով հովտում, այդպիսի հովիտները կոչվում են կիրճեր: Այդպիսի կիրճեր շատ կան մեր յերկրամասի լեռնային մասերում, որինակ՝ Թերեքի, Սուլակի, Կուբանի հոսանքներով:

Մոտենալով գետաբերանին, գետը սովորաբար հոսում է հարթավալըով, նրա հոսանքն այստեղ դանդաղ ե: Առուներից և հովիտներից բերած հողային մասնիկները ջրի միջից նստում են հատակին: Այդ վողողած խավերը կուտակվելով դառնում են ծանծաղությունը:

Ա.Ռ.Զ.Ռ.Ռ.Խ.Թ.Ց.ՈՒ.Ն.

Հանձնարարեք պատանի բնագետների խմբակին դիտելու առուների գոյանալը և նրանց աճումը դպրոցի ռայոնում: Դրա համար անհրաժեշտ ե ուշադրությամբ դիտել թե ինչ տեսակներից ե կազմված առվակների և առուների հատակին ու կողքերը: Զափեք առուների յերկարությունը, լայնությունը և խորությունը, Դիտումների հետեւանքները գրի առեք առանձին տեսրում: Նշանակեցեք, թե յերբ են կատարվել այդ դիտումները: Յերբեմն կրկնեցեք դիտումները: Համեմատելով տեսրում գրի առածները, հեշտությամբ կարող եք վորոշել, թե առվակներն ու առուները աճեւմ են, թե վոչ և ինչ արագությամբ և կատարվում այդ փոփոխությունը: Դիտումների հետեւանքները քննարկել խմբակում:

ԴԱՏԱՎԱՅՐԵՐ ՅԵՎ ԼԵՌՆԵՐ

Ով յեղել ե Սալսկի և Կուբանի տափաստաններում, նա տեսել ե լայնածավալ տափաստանները: Տափաստանի հարթ մակերեսույթը շատ ընդարձակ է: Հորիզոնը հազիվ ե յերևում մշուշում: Հողի այդպիսի հարթ մակերեսույթը կոչվում ե դաշտավայր: Բայց բոլոր դաշտավալը բարձր միատեսակ չեն. կան, վոր ծովի մակերեսույթից բարձր են, կան և, վոր ցած են: Ծովի մակերեսույթից 200 մետր բարձր դաշտավայրերը կոչվում են—հարթություններ:

Ծովի մակերեսույթից ավելի քան 200 մետր բարձր դաշտավայրերը կոչվում են—բարձրություններ:

Բոլորովին հարթ դաշտավայրեր սակավ են պատահում. սովորաբար նրանք կտրտված են առուներով և ձորերով, կամ ծածկված են բլուրներով: Բլուրը—բարձրություն է, վորն իր ձեռվ խոտի դեզի կամ հողաթմբի յե նմանում: Մեր յերկրամասում բլուրներ շատ կան: Բլուրներով հարուստ ե մանավանդ մեր յերկրամասի հարավային մասը: Անցնելով հյուսիսից դեպի հարավ, կնկատենք, վոր հետզհետե հարթությունները փոխարինվում են բարձրություններով, վորոնց վրա յերևան են գալիս բլուրներ, իսկ հետո դրանց փոխարինում են ավելի մեծ բլուրներ—լեռներ:

Լեռներն իրենց ձեռվ չեն տարբերվում բլուրներից. դրանք միայն ավելի բարձր են:

Ծովի մակերեսույթից 500 մետր բարձրությամբ բլուրները կոչվում են լեռներ: Առանձնացած լեռներ սակավ են պատահում. հաճախ նրանք լինում են խմբերով, իրար շատ մոտ և կազմում են շղթա: Լեռների խմբերի այդպիսի դասավարությունը կոչվում է—լեռնաւորթա: Այդպիսի լեռնաշղթային կազմում մեր կովկասյան լեռները:

Յերկրի մակերեսույթն իր բոլոր ցածրություններով և բարձրություններով կոչվում ե ուելեֆ: Մելեքը մեծ նշանակություն ունի առողյա

կյանքում: Ճանապարհներ կառուցելիս ընտրում են այնպիսի ուղղություն, ուր քիչ են պատահում ձորեր և բարձրություններ: Ձեզնից յուրաքանչյուրը տեսել ե, թե ինչպես վոլորապտույտ են խճուղիներն ու յերկաթուղիները: Նրանք անցնում են ձորերի, բլուրների և լեռների բոլորքով: Շատ ավելի հարմար ե հարթ տարածությամբ անցնել, քան բարձրանալ բլուրների կամ ձորերի զառիվայրներով:

Պակաս նշանակություն չունի ույլեփը նաև սոցիալիստական քաղաքների կառուցման գործում: Հին քաղաքներից և գյուղերից շատերն ընկած են անհարմար, լեռներով կամ ձորերով ծածկված վայրերում: Յերբ հիմնվում եյին այդ քաղաքներն ու գյուղերը, կապիտալիստները շատ քիչ եյին հոդ տանում աշխատավոր բնակչության հարմարությունների մասին. նրանք մտածում եյին իրենց հարմարությունների մասին և բնակվում եյին քաղաքի ամենալավ մասերում կամ քաղաքից գուրս հատուկ ամառանոցներում: Լեռնային ժողովուրդները, վորոնց լեռների խորերն եր քշել ցարական կառավարությունը, ստիպված եյին բնակություն հաստատելու անառիկ վայրերում, լեռների ժայռոտ թեք փեշերում: Այժմ, յերբ աշխատավորությունն ինքն ե կառուցում իր քաղաքներն ու գյուղերը, հոգ ե տարվուու դրանց ապագա բնակչների բարեկարգ վիճակի մասին և այդ քաղաքների և շնչքերի կառուցման համար ընտրվում են հատուկ վայրեր: Բնակավայրերի ընտրության ժամանակ մեծ նշանակություն ունի ույլեփը: Նրա բնույթից ե կախված ջրմուղու, տրամվայի, ճանապարհների և նրանց միացման կառուցումների հարմարությունը, վորից կախված ե անհրաժեշտ մթերքների և ապրանքների փոխարքության հաջողությունը:

Ավելի և մեծ նշանակություն ունի ույլեփը գյուղատնտեսության մեջ, ուր ցանվելիք բույսերի ընտրության համար ստիպված են լինում հաշվի առնելու հողամասերը: Բրինձ ցանելու համար պահանջվում են ջրի մոտ գտնվող հարթ հողամասեր: Այդ անհրաժեշտ ե այն պատճառով, վոր բրինձը մեծ քանակությամբ ջուր ե պահանջում: Ամբողջ ամառվա ընթացքում բրնձի դաշտերը հեղեղված են լինում ջրով: Ուրիշ բան ե ցորենը կամ յեզիրտացորենը ջրի մեջ նրանք չեն ածի: Նրանց համար ընտրվում են ավելի չոր հողամասեր: Չորերով կտրտված հողամասերն անպետք են ցորենի կամ յեզիրտացորենի համար, բացի այդ, այդպիսի հողամասերն անհարմար են մեքենաներով մշակելու համար: Սակայն խաղողը, ծխախոտը, զանազան տեսակի պըտու ծառերը հաջողությամբ աճում են ձորերի և լեռների լանջերին: Բայց կան և այնպիսի տեղեր, ուր վոչինչ չի կարելի տնկել և ցանել՝ դրանք ժայռերն են և ապառաժոտ տեղերը:

ՀԱՐՑԵՐ

Ի՞նչ ե ույլեփը:

Ի՞նչով են զանաղանվում հարթությունը բարձրությունից և բլուրները լեռներից:

Ի՞նչ ե լեռնաշղթան:

Ի՞նչ է գերազանցությունը ձեր զպրոցի շրջակայքում:

Ի՞նչ լեռներ կան մեր յերկամասում:

Հողի մակերեսույթի վեր տեսակներն են հարմար յերկագործության համար:

ԱՇԽԱՏԱՆՔ.

Վերցրեք մի արկղ խոնավ ավաղ, պատրաստեք դրանից բարձրության, հարթության, լեռան մողելները:

Դեպի գյուղ, քաղաքից դուրս ընագիտական եկակուրսիաների ժամանակ կատարեցեք ուլյեֆի ւսումնասիրություն: Դիտումներն ու նկարագրությունները զրեք տեսրերում: Աշխարհագրության զամերին քննարկեք այդ գիտողությունները:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՊԼԱՆ

Բանջարանոցի հողամասի պլանը կազմելիս մենք հողամասը պլանում փոքրացրել եյինք 1000 անգամ:

Վորպեսզի պլանով իմանանք, թե այս կամ այն ինչը վորտեղ ե գրանվում, նրա վրա գրություններ եյինք արել՝ «Ծիան մեքենա», «Ծերմոց», «Խողովակ» և այլն: Բայց դա հնարավոր չե ամեն տեսակ պլանների համար:


Յեթե մեզ հարկավոր լիներ կազմելու կոլտնտեսության կամ ամբողջ գյուղի գյուղաբուժությունը մանրամասն պլանը, մենք պետք ե վերցնեյինք ուրիշ մասշտաբ: Նոր մասշտաբով պետք

կլիներ փոքրացնել վհան թե 1000, այլ շատ ավելի անգամ:

Շատ փոքրացնելու դեպքում առարկաների պատկերացումը պլանի վրա շատ փոքր կլինի: Առարկաները նշանակել գրություններով դժվար ե: Նրանք ավելի շատ տեղ կրոնեն, քան առարկաների պատկերացումները: Պլանի վրա ըուրոր առարկաները և յերկրի մակերեսույթի ձևերը նշանակելու համար ոգտվում են պայմանական նշաններով, վորոնք կոչվում են տեղագրական նշաններ:

Ոգտվելով այդ նշաններով, առանձին առարկաները պատկերացնելու յենք պայմանական նշաններով: Մեր պլանը լինելու յեառանց գրությունների, բայց պայմանական նշանների ոգնությամբ նենք իմանալու յենք յերկաթուղու, ուն, կամըջի և այլն ճիշտ տեղերը: Այդպիսի մանրամասն պլանը, վորի վրա բոլոր մանրամասնությունները պատկերացված են տեղագրական նշաններով, կոչվում ե—տեղագրական պլան:

ԱՇԽԱՏԱՆՔ.




Նկ. 12. ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՊԼԱՆ

Ծանոթանալով տեղագրական նշաններին, նկարեցեք այդ նշանները տեսրերում: Նայեցեք անդամական պլանը դրայի և պատմեցեք, ինչ ե նա պատկերացնում:

Գտեք պլանի վրա ճանապարհը, գետը, ճահճը, կղզին:

Ուսումնասիրեցեք դպրոցի շրջակայքի տեղագրական պլանը: Կազմակերպեցեք եկաղուրսիա, վորոշելով ճանապարհը պլանով: Ճանապարհին ստուգեցեք, թե ձեր տեսածը նշանակված է պլանում: Յեթե ձեռքի տակ չունեք պատրաստի պլան, ոդովեցեք տեղագրական նշաններով և ինքներդ կազմեցեք տեղագրական պլանը:

Ծանօթանալով տեղագրական պլանին, դուք նկատում եք, վոր նրա վրա պայմանական նշաններով նշանակված է այն ամենը, ինչ վոր գտնվում է



Նկ. 13. Տեղագրական պլան

Երկրի մակերևույթի վրա: Պլանի վրա նշանակված են՝ ճանապարհները, շինությունները, անտառները, բարձրությունները, գետերը, ձորերը, լեռները, նույնիսկ՝ առանձին ծառերը: Այժմ ձեզ համար պարզ է, թե ինչ մեծ նշանակություն ունի տեղագրական պլանը ջրմուղու, կոյուղու կառուցման համար տեղ ընտրելու աշխատանքում: Առանձին նշանակություն ունի նա շոփերի, գյուղատնտեսի, ճանապարհներ կառուցողի համար:

Կարեռ նշանակություն ունի տեղագրական պլանը նաև ռազմական գործում: Եթեք աշխատավորությունն ստիպված կլինի պաշտպանելու համաշխարհային պրոլետարիատի հայրենիքն իմպերիալիստների հարձակումից, տեղագրական պլանը մեծ ծառայություն կհասցնի:

Կարմիր բանակի հրամանատարը, ունենալով վորոշ վայրերի տեղագրական պլանը, իմանալու յե, թե թշնամին վորտեղից կարող է անցնել դիմակավորված, վորտեղ կարող է փոխադրել իր հրանոթները և վոր տեղերն են անանցանելի: Տեղագրական պլանը կոզմի Կարմիր բանակի հրամանատարին տեղի պայմանների համապատասխան ճիշտ դասավորելու իր ույժերը թշնամիներին հետ մղելու համար: Պլանը ցույց կտա, ինչպես գաղտնի պահել գորքի տեղը, ինչ ճանապարհներով գորքին անվտանգ կերպով ռազմամթերք և պարեն հասցնել, ինչ տեղերում լարափակումներ դնել և այն:

Պրոլետարիատը ստիպված է լինելու ավելի մեծ կորիներ մղելու կապիտալիզմի դեմ, նրան վոչնչացնելու համար: Կապիտալիզմը փորձել է, փորձում է և գեռ փորձելու յե յերկրագնդի յերեսից ջնջելու նրան ատելի

կարմիր յերկիրը — ԽՍՀՄ: Մենք պետք են հաղթահարենք այդ կորիներում: Այդ կոչն են անում պիոներական կանչը՝ «Բանվորական գործի համար յեղի՛ր պատրաստ»: Ամեն մի պիոներ պետք է իմանա ոգտվել տեղագրական պլանով, ճանաչել նրա նշանները:

Պիոներական արտելքների, արշավների ժամանակ, ճամբարներում սովորեցեք գործածել տեղագրական պլանը:

Պիոներն այսաեղ ել պատասխանելու յե՝ «Միշ պատրաստ»:

ՀԱՐՑԵՐ

Ի՞նչպիսի ոգնություն են հասցնում տեղագրական պլանը ճանապարհ կառուցողին, հողաչափին, Կարմիր բանակի հրամանատարին նրանց աշխատանքներում:

Ի՞նչ են պլանը, ինչի՞ յե նա հարկավոր:

Ի՞նչ են մասշտաբը:

Ի՞նչպես վորոշել հորիզոնի կողմերը պլանով:

Բոլոր պլանների մասշտաբները միենանույն են, թե վոչ:

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐ

Ամենքդ գիտեք, թե ջուրն ինչ է: Իսկ մտածե՞լ եք արդյոք, թե ինչ դեր է խաղում նա մեր կյանքում:

Չուրը մարդու կյանքում մեծ նշանակություն ունի: Մարդիկ առանց ջրի չեն կարող ապրել: Բայց ջուրն անհրաժեշտ է վոչ միայն խմելու և կերակրի համար: Ջեղսից շատերը ճանապարհորդել են գնացքով: Գլխի ընկել եք, վոր գնացքի քաշողը ջուրն է գոլորշու ձևով: Յեթե չիներ ջուրը, շոգեկառքը չեր գնա: Փորձեք շենքի համար առանց ջրի ցեմենտ կամ կավ պատրաստել: Ջրով մենք ոգտվում ենք մեր զանազան կարիքների համար: Առաջին հնգամյակի զարդը — Մազնիտոգորսկու մետաղարդյունաբերական գործարանը, որպական այնքան ջուր է գործածում, ինչքան խմում է լենինգրադի 2 և կես միլիոն բնակչությունը: Ուստապի ջրմուղին բնակչության և արդյունաբերության կարիքների համար Դոնից որական վերցնում է 3. 200 հազար դույլ ջուր:

Այդ է պատճառը, վոր գուղերը, ստանիցները, քաղաքները միշտ գոնվում են գետերի կամ աղբյուրների մոտ: Անհրաժեշտ է նաև նկատել, վոր ջրային ճանապարհը հաղորդակցության համար ամենաեժանն է:

Չուրը յերկրիս վրա յե ընկնում անձրեսի, ձյունի կամ կարկտի ձևով: Ջրի մի մասը հոսում է գետնի մակերեսութի վրայով, մի մասը ծծվում է հողի մեջ, մի մասն ել գոլորշիանում է: Հողի զանազան տեսակների միջով ջուրը միատեսակ չի ծծվում: Ինքներդ հաճախ տեսել եք, վոր անձրեսից հետո ջուրն արագ ծծվում է ավազի մեջ և մնում ու լճանում է կավահողի վրա, չողի այնպիսի տեսակը, ինչպիսին է ավազը, կոչվում է ջուր անցկացնող՝ իսկ այնպիսին, ինչպիսին կամ յե ջուր չանցկացնող:

Ուր է գնում հողի մեջ ծծվող ջուրը: Նա ջուր անցկացնող շերտերից անցնում է խորանում է: Իր ճանապարհին նա հանդիպում է հողի այնպիսի տեսակներին, ինչպիսին է կավը: Կավի վրա ջուրը կանգ է առնում և սկսում է կուտակվել: Այդպիսի ջուրը կոչվում է գետնաջուր կամ ստորերկրյա ջուր: Ստորերկրյա ջուրը դուրս հանելու համար փորում էն խորը հորեր — ջրհորներ: Ջրհորը փորում էն այնքան, մինչեւ վոր հասնում էն ստորերկրյա ջրին: Յերբեմն դետնի տակի ջուրը շատ մոտ է լինում, այդ գեղքում ջրհորը խորունկ չե իսկ յերեմն հեռու յե գտնվում, այդ դեղքում ջրհորները շատ խորն են փորում:

Մեր յերկրամասի տափաստանային մասում ջրհորները ջրի միակ աղբյուրն են հանդիսանում:

Առանձնապես կարևոր դեր են խաղում ջրհորները մեր յերկրամասի յերաշտային մասերում։ Ջրհորների մեծ մասն ամառվա շոգերին չորանում են Մարդիկ ստիպված են լինում ջրի գնալու տասնյակ կիլոմետրներ, իսկ անասուններին ջրելու տանել ավելի խորը ջրհորների մոտ, վորոնց մեջ դեռ ջուրը մնացել է։

U.S. GOVERNMENT

Ծանոթանալով դպրոցի ռայոնի առողջության պաշտպանությանը, քննեց զեք ջրհորների դրությունը:


ΣΥΡΓΕΡ

Զեր բնակավայրում ջուրը վլրտեղից են առնում:
Բոլոր ջրհորներում ջուրը միենույն խորության վրա յե գտնվում, թե վոչ:
Ամեն տեղ ել ջուրը միենույն համան ունի, թե վոչ:

ԱՐՅՈՒԹԵՐՆԵՐ

Ամառն եկսկուրսիաների և պիոներական արտելքների ժամանակ հաճախ
յեղել եք ձորում, ապառաժոտ տեղերում, գետի ափին. այնտեղ նկատել եք,
վոր հողը կազմված է զանազան տեսակներից: Այդ տեսակները պառկած են
շերտերով: Նկատել եք նույնպես, վոր այդ շերտերը պառկած են թեք ուղղու-
թյամբ: Այդ թեքվածքների շնորհիվ կազ-
մվում են ստորերկրյա առվակներ: Ծծվող
ջուրը հասնում է չանցկացնող շերտերին,
հոսում նրանց վրայով և հաճախ գետնի
մակերևույթի վրա դուրս գալիս իրեւ աղ-
բյուր:

Ածխահորերում, գետնի տակ կարելի յե տեսնել ստորերկրյա վտակներ. մի տեղում ջուրը թափում է առաստաղից կաթիլներով, մի ուրիշ տեղում



Նկ. 14 Աղբյուրներ

առատ հոսանքով։ Առվակների միջով ջրերը կուտակվում են ջրհորում։ Այս տեղից ջրհան մեքենայով ջուրը դուրս է թափվում գետնի մակերևույթի վրա։ Ջրհան մեքենաներն որ ու գիշեր աղմկում են. յեթե ջրհան մեքենան չաշխատի, ամբողջ ածխահորը ջրով կցվի։ Ածուխ արդյունահանելիս՝ ածխահորերում հաճախ հանդիպում են կուտակված ստորերկրյա ջրերի։ Ջուրն ուժգին կերպով իր համար ճանապարհ է բացում և ավերում ու հեղեղում ամեն ինչ։ Այսպիսի դեպքերը քիչ չեն. ջուրը հեղեղում է ամբողջ ածխահանքը։ Բանվորները. յերբեմն հանկարծակիի դալով, չեն կարողանում ժամանակին դուրս գալ ածխահորից և խեղդվում են։ Հեղեղված ածխահորերը յերկար ժամանակ չեն ողտագործվում։ Ամիսներ և քաշում, մինչև ամբողջ ջուրը դուրս է թափվում։

Մենք արդեն գիտենք, վոր ջրերն ամեն տեղ միևնույն համը չեն ունենում, այլ դա կախված է նրանից, թե նրանց մեջ ինչ տեսակն լուրջեր են լուծված: Յերբեմն պատահում են այնպիսի ջրեր, վորոնց մեջ պարունակվում են մարդու առողջության համար ոգտագար աղեր. այդպիսի ջրերը կոչվում են—հանքային ջրեր: Մեր յերկրամասում այդպիսի ջրերը շատ են պատահում լեռներում: Առանձնապես հայտնի յեն՝ Նարզանը և Յեսենտուկին: Շատ այդպիսի աղբյուրներ կան նաև Ոսեֆիալում, Կարաչայում, Չեչնիայում, Դաղստանում, Մյասնիկյան ռայոնում (Նիսվիտայում), վորոնք դեռ չեն ուսումնասիրված:

ԱՇԽԱՏԱՆՔ

Բնագիտության դասերին հողի ուսումնասիրության համար զեկի ձորերն ու ապառաժուա տեղերը կատարվող արտելքների ժամանակ, դիտեցեք ձորերի ափերի ու թեքվածքների հողի աեսակները։ Հավաքեցեք դրանց նմուշները և կունեցիա կազմեցեք։

Եկամակերպեք գեղի շինարարության վայրը, ուր գետնի և ստորեկրյա ջրերի ուսումնասիրություն և կատարվում: Նայեցեք, ինչպես են լառուցողներն իսանում, թե գետնի տակ ինչպիսի հողաշերտեր կան և նրանց միջով հոսում են արդյոք ստորեկրյա ջրեր, թե վոչ:

Յեթ դպրոցի շրջակայքում կան այրել, հանձնարարեք պատանի բնագետներին հետախուզելու նրանց, թե ինչ տեսակներից են նրանց պատերը, կմ արդյոք ջուր, պարղեցեք, թե ինչպես են գոյացել այդ այրերը, և ում աշխատանքն են մասուկմնա, թե ՞որի:

Պատահնի ընազետների խմբակն իր բոլոր դիտողությունները հաղորդում են ամբողջ խմբի աշխարհագրության ալ ավապահներին:

Ե՞նչակա և զուրն ալրեր գոյացնում:

Եկնառառությունն սկսելուց առաջ՝


Երանելի է այս պատճենը ուղարկել Հայաստան՝ ուղարկել առաջարկ կամ պահանջութեան մասին:

Դաշտում կազմակերպ առջևադեմքը
Դաշտում կազմակերպ առջևադեմքը

Συργει

ԱՐՏԵԶՅԱՆ ԶՐԿՈՐՆԵՐ

Մեր յերկըաքասի արևելյան մասի լայնածավալ տափաստաններում անձրևներ քիչ են գալիս: Գարնանը ձորակներում հոսում են ձյան ջրերից առաջ յեկած առվակներ: Տափաստանը ծածկվում է կանաչ խոտերով և գույն-զգույն ծաղիկներով: Արևել կը կիզիչ ճառագայթներով աստիճանաբար այ-




Նկ. 15 Արտեզյան աղբյուր

Բնէն ե պատճառը, վոր այստեղ ջուրը քիչ ե, միթե այստեղ ջուր չկա: Կա, միայն պետք ե հանել: Սոցիալիստական տնտեսությունը ջրի համար պայքար ե մղում: Ջուրը գտնելու համար տափաստաններում նորեր են փորկում, սւսումնախրվում ե հողը: Ջուրը յերբեմն գտնվում է 200—300 մետր խորության վրա: Հաճախ խոր հորերից պարզ և պաղ ջուր ե հոսում անընդհատ: Յեթե ջուրը գտնվում ե, բայց նա ինքը չի բարձրանում, դնում են ջրհան մեքենաներ, վորոնք դուրս են բերում ջուրը: Արտեզյան ջրհորն սկսում ե աշխատել, նրա շուրջը գտնվող տափաստաններում յերեսում ե բուսականություն. տափաստանը կենդանանում ե:

Արդեն շատ այդպիսի ջրհորներ են փորված և շարունակվում են այդ ուղղությամբ աշխատանքները:

ՀԱՐՑԵՐ

Նայեցեք նկարը և պատասխանեցեք հարցերին:
Ինչո՞վ են տարբերվում արտեզյան ջրհորները սովորական ջրհորներից:
Այդպիսի խորություններում վո՞րտեղից ե ջուր ստացվում:



Նկ. 16.


Գարունը համաելուն պես, արեն սկսում ե ավելի և ավելի տաքացնել գետինը: Ջան տակից կարկաչում են կայտառ առվակները: Առվակներն իրենց հոսանքում պատահում են ուրիշ առվակների, միանում նրանց և առուներ կազմում: Մրանք իրենց հոսանքում միանալով իրար կազմում են գետակներ: Այսպես կարճ ժամանակում կազմվում են գարնանային գետերը: Ջան ջրի մի մասը, ինչպես արդեն գիտենք, հոսում, թափվում ե գետերը, մյուս մասը՝ ծծվում ե նողի մեջ: Ստորերկյա ջրերը ջուր են մատակարարում աղբյուրներին: Գետնի վրա դուրս գալով, աղբյուրների ջրերն առվաճներ են կազմում: Գարնան ընթացքում ձլունն ամեն տեղ միատեսակ չի հալչում: Բարձր լեռների վրա ձլունը մնում ե վողջ տարին: Ամառվա շոգերին այդ տեղերի ձյունն ու սառույցը սկսում են հալչել և առաջ են գալիս առվակներ:

Իրենց հոսանքում այդ առվակները միանում են իրար և կազմում գետեր: Այն տեղը, ուր գետն առնում ե իր սկիզբը, կոչվում ե — ակունք: Այն տեղը, ուր նա թափվում ե ծովը, կոչվում ե — գետաբերան: Ինչպես գետակը, այնպես ել գետը ունի յերկու ափ՝ աջ և ձախ: Վորոշել, թե ափերից վորն ե աջը կամ ձախը՝ դժվար չե: Պետք ե յերեսով կանգնել հոսանքի ուղղությամբ: աջ ձեռքի կողմը կլինի գետի աջ ափը և ձախ ձեռքի կողմը — ձախ ափը: Գետի աջ և ձախ ափերից նրա մեջ են թափվում բազմաթիվ գետակներ և գետեր: Գետի յերկու ափերից նրա մեջ թափվող գետերն ու գետակները կոչվում են — վտակներ: Գետն իր բոլոր վտակներով կազմում ե գետային սիսեմ:

ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ՅԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ԳԵՏԵՐ

Մեր յերկրամասի բոլոր գետերը կարելի յե բաժանել յերկու մասի՝ տափաստանային և լեռնային: Տափաստանային գետերը հոսում են հարթության վրայով: Նրանց հոսանքը դանդաղ ե, ափերը՝ թեքված: Գարնան նըրանք վարարում են ձյան ջրերով և հեղեղում ափերը:

Տափաստանային գետերի գարնանային հեղեղումները շատ մեծ են լինում: Որինակ, Որստովի կողքից անցնող Դոն գետը հեղեղում ե 7—10 կի-



Նկ. 17. Դոն գետը

լոմետը տարածություն, իսկ ամառվա շոգերին նրա լայնությունը 200 մետրից ափելի չե:

Տափաստանային գետերից մի քանիսն այնքան խորն են, վոր պիտանի լեն նավագնացության համար: Մեր յերկրամասի տափաստանային նավագընաց գետն ե Դոնը:

Տափաստանային գետերից խիստ տարբերվում են լեռնային գետերը: Նրանք սկիզբ են առնում ձյան և սառցի ջրերից՝ լեռների բարձունքներում: Լեռնային գետերը հոսում են թեք զառիվայրներով: Նրանց կատաղի ջրերը քշում, տանում են ժայռերի բեկորները: Այդ բեկորները, ճանապարհորդելով գետերի հատակների վրայով, հարթվում են և կոկված սալաքարեր գառնում: Լեռնային գետերը հաճախ վրարում են լեռներում տեղացող հորդ անձնեմ ներից և ձյան ու սառույցն երի ջրերից: Առանձնապես ջրառատ են լինու-

նրանք շոգ ամառվա կեսին, յերբ ձյունը սկսում է ուժեղ կերպով հալչել: Ամառվա հեղեղությաների ժամանակ նրանք յերբեմն ավերում են ամբողջ գյուղեր, կամուրջներ և մեծ մասներ են հասցնում ցանքսերին:

Լեռնային գետերի արագընթաց հոսանքն այժմ ոգտագործվում է ելեկտրականություն ստանալու համար: Լեռնային գետերի վրա կառուցվում են հիդրո-ելեկտրակայաններ: Մեր յերկրամասում կառուցվում են այդպիսի լեռնային կայաններ—մեկը՝ Ոսերիայում, Գիզելդոն գետի վրա, մյուսը՝ Կաբարդայում, Բակսան գետի վրա:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրեցեք ձեր դպրոցի ռայոնում գտնվող վորեկ գետի կամ գետակի հոսանքը: Գտեք նրանց ակունքը և գետաբերանը: Վորոշեցեք նրանց աջ և ձախ ափերը: Գտեք նրանց վտակները: Պարզեցեք, թե նրանց ջրերն ինչպես են ոգտագործվում բնակչության կողմից: Ցեղեւ մոտ գտնվող գետեր կամ գետակներ չկան, հետաքրքրվեցեք, թե ձյան և անձրևների ջրերից ինչպես են առվակներ գոյանում: Դիտումներից հետո տետրում նկարեք գետի և նրա բոլոր վտակների պլանը:

ՀԱՐՑԵՐ

Դպրոցի ռայոնում ինչ գետ կամ գետակ կա:

Գետի վմբ սասերն են կոչվում ակունք և գետաբերան:

Զիմանալով գետի հոսանքի ուղղությունը, կարելի յի վորոշել նրա աջ կամ ձախ ափը:

Ի՞նչ դեպքում ե գետը կամ գետակը վտակ կոչվում:


Գետերն ու աղբյուրները վհրտեղից են ջուր ստանում:

Ինչով կ տարբերվում լինային գետը տափաստանային գետից:

Ի՞նչ ոգուտներ և մասներ են տալիս գետերը:

ԼԱՎԱ ՅԵՎ ԼԻՇ

Մենք արդեն գիտենք, վոր մեր յերկրամասի տափաստանային մասում սակագ են անձրևները: Գարնան, յերբ ձյունը սկսում է հալչել, տափաստանային անձրևները: Գարնան, յերբ ձյունը սկսում է հալչել, տափաս-



Նկ. 18. Լավ յեվ լիՇ.

տանային առվակները դառնում են ջրառատ գետակներ: Նրանց արագընթաց հոսանքը քանդում, տանում ե հողը, վորի պատճառով ջուրը շատ պղտոր և լինում: Ձյունը վերջացավ, չորանում են և գետակները: Տեղ-տեղ մնում են առվակներ, բայց դրանք ել ամառվա շոգերին ցամաքում են:

Ամառվա շոգին ջուր և խոնավություն ունենալու համար փորում են լճակներ, վորը դժվար գործ է: Գետակի կամ գարնանային առվակների լայնությամբ շինվում է պատվար, վորը պահում է ջուրը լճակում: Լճակի շուրջը սովորաբար ծառեր են տնկում, դա պաշտպանում է նրան արագ չորանալուց: Լճակները լինում են զանազան մեծության: Լճակներն ոգտագործվում են բանջարանոցները, անասուններին ջրելու և արդյունաբերական զանազան բանականական համար: Որինակ, «Արտել» ածխահանքերի խոշոր ելեկտրակայանի տուրբինների համար ոգտագործվում է լճակի ջուրը: Վերջին ժամանակներս մեծ ուշադրություն ե դարձվում լճակներում ձկներ բազմացնելու վրա:

Իր արտաքինով լիճը նման է լճակին. յերկուսն ել խորությունների մեջ կուտակված ջրեր են, միայն այն տարբերությամբ, վոր լճակի խորությունը ստացվել ե ձորում կամ ձորակում նրանց լայնությամբ կառուցված պատվարների չնորհիվ, իսկ լճի խորությունը վոչ թե պատվարների, այլ յերկրի մակերևույթի քայլայման հետևանքով: Լճերը տարբերվում են իրենց մեծությամբ և խորությամբ: Մեր յերկրամասում կան շատ լճեր, վորոնցից ամենամեծը կասպից «Ճովն» ե: Նա սովորաբար ծով ե կոչվում միայն իր մեծության պատճառով, բայց իսկապես նա լիճ ե, վորովհետև մյուս լճերի պես նա ցըջապատված ե ցամաքով և ծովերին չի միանում:

Լճերն ոգտագործվում են նավագնացության, ձկներ բազմացնելու և ձկնորսության համար:

ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՔԱՐՏԵԶԻ ՀԵՏ

Վերցնենք Հյուսիսային կովկասի քարտեզը և տեսնենք ինչ ե պատկերացված նրա վրա:

Քարտեզի ձախ կողմում պատկերացված են Սեվ և Ազովյան ծովերը, աջ կողմում՝ Կասպից ծովը: Ինչ տեսակ քարտեզներ ել չլինեն, նրանց ձախ կողման ընդունվում ե իրեւ արևմուտք, աջ կողմը՝ արևելք, վերևի մասը՝ հյուսիս, սերքեկի մասը՝ հարավ:

Քարտեզի հյուսիսային և հարավային մասում իբրևում ե մի լայն կարմիր գիծ, վորը բաժանում է մեր յերկրամասը ԽՍՀՄ-ի հարևան մարզերից: Այդ կարմիր գիծը մեր յերկրամասի սահմանագիծն ե:

Սյժմ առնենք Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության քարտեզը և նրա վրա գտնենք մեր յերկրամասը:

Մինք տեսնում ենք, վոր ԽՍՀՄ-ի քարտեզի վրա մեր յերկրամասը փոքրիկ տեղ ե բռնում: Բացի Հյուսիսային կովկասից, այստեղ պատկերացված են մեր Խորհրդային Միությունը կազմող բոլոր հանրապետությունները, մարզերը, յերկրամասերը: Այսպիսով, ԽՍՀՄ-ի քարտեզն ընդգրկում է մեծ հողային տարածություն, վորն իր մեծությամբ հավասար ե ամբողջ յերկրագնդի ցամաքի մեկ վեցերորդ մասին: Հյուսիսային կովկասի քարտեզը կազմում է ԽՍՀՄ-ի քարտեզի մի մասը: Յեթե ուշադրությամբ դիտենք այդ յերկու քարտեզների մասշտաբները, կնկատենք, վոր նրանք միանման չեն: Հյուսիսային կովկասի քարտեզի վրա մասշտաբն ավելի մեծ ե, քան ԽՍՀՄ-ի քարտեզի վրա:

Սյժմ մտաքերենք բանջարանոցների, կոլտնտեսությունների պլանները կազմելու մեր աշխատանքները: Այստեղ ներկայացված եյին փոքր հողամասեր. նշանակված եյին մարգերը, ջրաբաշխիչը, ցանկապատը և այլն: Պլանի

վրա մանրամասնորեն նշանակված եյին տվյալ վայրում գտնվող առարկաները
Ուրիշ բան ե քարտեզը. նա, ինչպես և պլանը, պատկերացնում ե վայրը
պայմանական նշանների միջոցով:

Բայց քարտեղի վրա մենք չենք դտնի արդեն առ անձիւ առարկաների, շենքերի, փողոցների պատկերացումները։ Քարտեղի վրա մասշտաբն ավելի փոքր է վերցվում, քան պլանի վրա։ Քարտեղի վրա պատկերացվում են լայնածավալ վայրերը՝ ռայոններ, յերկրամասեր, հանրապետություններ։ Ամեն մի քարտեղ ունի իր վորոշ մասշտաբը։

ԱՇԽԱՏԱՆՔ

Գտեք ԽՍՀՄ-ի և Հյուսիսային կովկասի քարտեզների մասշտաբները, համեմատեցեք նրանց և իմացեք ինչով են իրարից տարբերվում:

Ոգավեցեք մեր յերկրամասի քարտեզի մասշտաբով և կատարեցեք հետևյալ աշխատանքները.

1. Հաշվեցեք, քանի կիլոմետր և տարածվում յերկրամասը հյուսիսից հարավ՝ Միլերովոյից մինչև Սոչի:
 2. Վորոշեցեք յերկրամասի տարածությունը արևմուտքից արևելք՝ Սոչիից մինչև Մախաչ-Կալա:
 3. Զափեցեք ձեր դյուզից կամ ստանիցից մինչև Ռոստով տարածությունն ուղիղ գծով:

4. Յեթե գալրոցն ունի ռայոնի քարտեղը, չափեցեք նրա մասշտաբով ռայոնական կենտրոնից մինչև ձեր գյուղը կամ ստանիցը բռնող տարածությունը:

Մեր յերկրամասում Գրողնիյից մինչև Տուափսե անց ե կացված նավթատար խողովակ։ Գրողնիյի ռայոնում արդյունահանվող նավթը փոխադրվում եր ցիստերներում՝ յերկաթուղիներով։ 1928 թվին մեր Միության բանվորներն այդ քաղաքների միջև անցկացրին յերկաթե խողովակներ, վորոնց միջով այժմ հոսում ե նավթը։

Նայենք, վրատեղ են դրված նավթատար խողովակները։ Հյուսիսային կովկասի քարտեղի վրա գտեք Գրոզնիյ քաղաքը։ Հիշեցեք, վոր քարտեղի վրա բաղաքները նշանակվում են փոքր և լուսահաներով։ Գրոզնիյից նավթատար խողովակներն անցնում են յերկաթուղու մոտով՝ Մոզդոկ և Արմավիր քաղաքների միջով։ Յերկաթուղին քարտեղի վրա ցույց ե տրված պայմանական նշանով։ Իրենց ճանապարհին նավթատար խողովակներն ու յերկաթուղին հատում են Թերեկ և Կուբան գետերը։

Գետերը քարտեղի վրա նշանակում են վոլորապտույտ և գծով,
Վորքան մեծ և լայն ե գետը, այնքան ել հաստ և քարտեղի վրա այդ
գետը պատկերացնող գիծը: Արմավիրց նավթատար խողովակն անցնում ե
յերկաթուղու մոտով Կովկասյան լեռների վրայով և համնում Տուափան, վոր
գտնվում ե Սև ծովի ափին: Ծովը քարտեղի վրա պատկերացվում ե կա-
պույտ գույնով: Նույն գույնով պատկերացվում են և լճերը:

1931 թվին անց ե կացված մի նավթատար խողովակ և, վորն անց-նում ե Ռոստովի միջոկ Արմավրից մինչև Ռուլյայինայի Խորհրդային Սոցիա-լիստական Հանրապետությունը:

ԱՇԽԱՏԱՆՔ

Ոգտվելով մասշտաբից, չափեցեք նավթատար խողովակների յերկարությունը—Գրողնիյից մինչև Տուափսե և Գրողնիյից մինչև Ռոստովի Վերցնենք Հյուսիսային Կովկասի Փիդիկական քարտեզը. Այդպիսի քարտեզի վրա պատկերացվում է մակերևութիւնի կազմությունը, վորո՞շի իննու

Քաղաքական քարտեզի վրա: Քաղաքական քարտեզի վրա ցույց է տրվում Հայութական ռաժանումը՝ ռալոնները, մարզերը, հանրապետությունները:

վարչական բաժանումը և այլառութեա, կատարենք մեր յերկրամասի քարտեզի
Այժմ ճանապարհորդություն կատարենք մեր յերկրամասի քարտեզի
վրայով հյուսիսից դեպի հարավ—Միլլերովոյից մինչև Սոչի: Առաջուց ար-
գեն չափել եյինք արդ քաղաքների միջև յեղած տարածությունը: Միլլեր-
վոյի շրջակայքը քարտեզի վրա ներկված ե կանաչ գույնով: այդ գույնով
ֆիզիկական քարտեզի վրա նշանակվում են ցածրությունները: Անցնելով
Շախտի քաղաքը, տեսնում ենք քարտեզի վրա արդեն սպիտակ կամ բաց-
շագանակագույն ներկ: Այդպիսի ներկով ցույց են տրվում փոքր բարձրու-
թյունները: Անցնելով Ռոստովը և մինչև Արմավիր, ամբողջ տարածու-
թյունը ներկված ե կանաչ ներկով: Այստեղ լայնարձակ ցածրություն ե-
ն Արմավիրից մինչև Տուափսետանող ճանապարհն անցնում ե զանազան մա-
կերևույթների վրայով: Նախ նույն ցածրությունն ե, ապա կանաչ գույնը
փոխարինվում ե սպիտակ, բաց—շագանակագույն, իսկ Տուապսեյի մոտերքը
ուր գնացքն անցնում ե լեռները, ներկված ե մութ շագանակագույն ներ-
կով: Տուապսեյից մինչև Սոչի գնացքն անցնում ե ցածրության ներ շեր-
տուով՝ Սև ծովի ափով:

Յերկի մակերևույթը՝ ցածրությունը, բարձրությունը, լեռները չափվում ե ծովի մակերևույթից: Բոլոր ծովերն ու ովկիանոսները միացած են իրար, այդ պատճառով նրանց ջրի բարձրությունն ամեն տեղ միևնույն է: Ծովերի և ովկիանոսների ջրերի մակերևույթից ե չափվում հողի մակերևույթի բարձրությունը: Յեթե վայրը ծովի մակերևույթից 200 մետրից բարձր չէ, կոչվում ե ցածրություն, իսկ այն վայրը, վոր ծովի մակերևույթից 200 մետրից բարձր ե, կոչվում ե բարձրություն: Վորքան բարձր բարձրությունը, այնքան մութ գույն ունի նա ֆիզիկական քարտեզի վրա լեռները բարձր են ծովի մակերևույթից ավելի քան 600 մետր: Դրանք բարտեզի վրա պատկերացվում են մութ-շագանակագույն ներկով:

Ծովերի խորոշթյունը զանազան, եւ Ափերի մոտ, ուր ծովը խորունկ չէ քարտեզի վրա նշանակվում և լաց-կապույտ գույնով։ Վորքան ծովը խորը ե, այնքան ել քարտեզի վրա ներկն ավելի մութ ե, և ամենախոր տեղերը նշանակվում են մութ-կապույտ գույնով։

ԱՇԽԱՏԱՆ

ԽՍՀՄ-ի քարտեղի վրա ցույց տվեք ամենամեծ ցածրությունները, բարձրությունները, լեռները, Գտեք քարտեղի վրա մեր ծովերի ամենախոր տեղերը և հասակը. Առ և Ասովան ծովերից փորն և ավելի խոր:

Գտեք հետեւյալ քաղաքները՝ Մոսկվա, Մագնիստոպորսկ, Դնեպրոստրոյ, Ռոստով, Յարսկան, Բագու, Խիվիլս, և ցույց տվեք դրանցից վորն եցածրության վրա և վորո՞ւ բարձրության:

ՅԵՐԿՐԱԳՈՒՆԴ

Կազմեցեք ձեր ռայոնի բնական պայմանների համառոտ նկարագրությունը և ցույց տվեք, թե ինչով են տարբերվում նրանք մեր ուսումնասիրած ռայոնների բնական պայմաններից:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ

Մեր յերկրամասի մեծ մասը—հարթավայր ե: Այդ հարթավայրը կտրրավում է Դոնեցյան բարձրություններով, վոր անցնում են Հյուսիսային Դոնեց գետի յերկարությամբ:

Կուբան և Կումա գետերի միջև գտնվող հարթավայրի միջին մասը կազմում է Սավրոպոլյան բարձրությունը:

Մեր յերկրամասի հարթավայրերը տեղատեղ ծածկված են բլուրներով և կտրտված են ձորերով, հեղեղատներով և փոս ընկած տեղերով:

Առանձնապես աչքի յեն ընկնում Մանիչ գետի մոտերքի փոս ընկած տեղերը, վորոնք գարնան հեղեղվում են ջրով և գետակներով միացած բազմաթիվ լճեր կազմում: Ամառը ջրերը գոլորշիանում են և լճերը՝ չորանուած:

Մանիչի փոս ընկած վայրը վորոշված եւ ոգտագործել յերկրորդ հնգամյակում Ազովյան և Կասպից ծովերի միջև ջրային ճանապարհ անցկացնելու համար:

Յերկրամտուի հարավային մասը ծածկված է նախալեռներով և կովկասյան լեռներով:

ԱՇԽԱՏԱՆՔ

Նայեցեք Հյուսիսային կովկասի քարտեղի վրա և թվեցեք բոլոր այն ուայնները, ուր կան ցածրություններ, բարձրություններ և լեռներ:

Դանիչի փոս ընկած վայրը:

Պատասխանեցեք հետեւյալ հարցերին՝

ա) Ամենաբարձր լեռները վեր մարզերում են գտնվում:


բ) Ի՞նչպես ե ձեր ռայոնի հողի մակերեսույթը:

գ) Դաղստանի հանրապետության վո՞ր մասն ե գտնվում ցածրության վրա և վորը՝ լեռների:

Կ Լ Ի Մ Ա Ն

Մեր յերկրամասը գտնվում է ԽՍՀՄ-ի հարավային մասում: Այդ պատճառով, համեմատած ուրիշ յերկրամասերի հետ, այստեղ տաքությունը շատ ավելի յեւ:

Հյուսիսային կովկասի ներսումն ել կլիման բազմատեսակ ե: Հյուսիսային և հյուսիս-արևելյան ուայոններում լինում ե ցուրտ ձմեռ և շոգ, չորացին ամառ: Մեծ վնասներ են հասցնում այդ կողմերում արևելքից փչող քամիները: Զմեռն այդ քամիները ձյունով ծածկում են յերկաթուղիները և



Նկ. 46 Հյուսիսապատ լեռները

քշում վոչխարսերի հոտերը: Սաստկանում են սառնամանիքները, գարնան և ամառը քամիները մեծ վնասներ են հասցնում դաշտերին, չորացնելով հողը: Բույսերը սկսում են չորանալ, և յեթե ժամանակին անձրևներ չեն զալիս, բոլորովին չորանում են ցանքսերը:

Ազովյան և Սև ծովերի մոտերքում կլիման այնքան խիստ չե, ինչպես բարելյան ուայոններում: Վողջ տարին այստեղ լինում են բավականաչափ

անձրւներ: Արևելյան քամիների ազդեցությունն այստեղ աննշան է: Ծովի-րից փչող քամիները բավարար ազդեցություն են անում

Սև ծովան ափերի կլիման մեր յերկրամասում ամեմախոնավն ե և ամենատաքը: Մեզ արդեն հայտնի յե, վոր Սոչիի ռայոնում լեռները կտրում են հյուսիսային և արևելյան քամիների առաջը: Սև ծովից փչում են խոնավություն պարունակող հարավային տաք քամիները: Զմեռը շատ քիչ ե ձյուն գալիս: Սառնամանիքներ համարյա չեն լինում:

Ազգային մարզերի և Դաղստանի լեռնային մասի կլիման կախված է նրանից, թե տվյալ վայրը ինչ բարձրության վրա յե գտնվում ծովի մակերեւույթից:

Ցած տեղերում, քամիներից պաշտպանված ձորերում տաք ե: Վորքան բարձր, լեռներում, ողն ափելի յե ցրտում, իսկ մինչև յերեք կիլոմետր բարձրության վրա այնքան ցուրտ ե լինում, վոր ամառվա ընթացքում ձյունն ամբողջովին չի կարողանում հալչել: Այստեղ միշտ ձյուն կա:

ԱՇԽԱՏԱՆՔ

Հետեւյցեք, թե մեր յերկրամասի կլիման ինչպես ե փոխվում սկսած Սև ծովի ափերից զեպի հյուսիս-արևելքը:

Ցույց տվեք այն ուայոնները, ուր շատ են լինում անձրւները և քիչ:

Հետաքրքրվեք ձեր բնակալվայրի յեղանակներով, պարզեցեք շատ անձրւներ են զալիս, թե քիչ: Խմացեք միջին բարեխառնությունը ամառ—հուլիսին և ձմեռը—հունվարին:

Համեմատեցեք նույն ժամանակվա Սև ծովյան ափերի բարեխառնության հետ: Պարզեցեք, թե ձեր բնակալվայրում ինչպիսի քամիներ են փչում տարվա ընթացքում:

Հ Ո Ղ Ե


Մեր յերկրամասի մեծ մասը ծածկված է պտղաբեր հողով —սևահողով: Սևահողը պարունակում է իր մեջ մեծ քանակությամբ բուսահող, այսինքն՝ փտած բույսի և կենդանիների մնացորդներ: Արգավանդ սևահողով առանձնապես հայտնի յեն կուբանյան և Մերձագովյան ցածրությունները:

Յերկրամասի արևելյան մասը ծածկված է շաղանակագույն, աղ պարունակող հողով: Շաղանակագույն հողերը քիչ բուսահող ունեն: Առատ խոնավություն յեղած դեպքում, այդ հողերն ևս լավ բերք են տալիս —ծխախոտ, շամարի հակեղեղ, արեվածաղիկ, գենագերչակ, սոյա, կենած և այլն:

Յերկրամասի արևելյան չորային շերտի տափաստանային բուսականությունը շատ աղքատ ե: Սակավաթիվ ցածրահասակ խոտերը՝ վիետանիոն, յեղեվին խոն, —տափաստանին մոխրագույն գույն են տալիս: Գետերի ափերին, նրանց ստորին հոսանքներում կան կոշտ խոտերով և յեղեգներով ծածկված, վարար ջրերով հեղեղվող լայնարձակ մարզագետիններ: Այստեղի չորացրած հողամասերում մշակվում ե՝ բրինձ, բամբակ և զանազան տեսակ բանջարեղին:

Արևելյան ուայոնների չորային տափաստանները պահանջում են արհետական վոռոգում: Գարնան հալչող ձյան ջրերը կուտակվում են ձորակներում, կառուցում են ամբարտակներ և լճակներ: Գետերից գուրս են բերվում վոռոգման ջրանցքներ: Արևելյան վոռոգման զործում մեծ զեր են խաղում Թերեկ գետն իր վտակներով և Սուլակ գետը՝ Դաղստանում:

Հյուսիսային կովկասի հարթավայրեր ունեցող մասերում անտառներ համարյա չկան: Միայն նախալեռնային մասերում և Սևծովյան ափերին կան բազմատեսակ սաղարթավոր և փշատերև ծառերով անտառներ: Սաղարթավոր ծառերից ամենաթանկարժեքն են՝ կաղնին, նըգարենին, հանարենին, բարձրաբուն հացենին, իսկ փշատերև ծառերից՝ դողդոջուն կաղամախին, եղեվնին, յելատինին:



Նկ. 47 Անտառ.

Սևծովյան ափերի անտառներում կան նաև մշտադալար ծառերի տեսակներ Առանձնապես թանկարժեք են դրանցից՝ կարսիր ծառը, մեսադալար տոսախրամենապինդ ծառը:

Մեր յերկրամասի մյուս թանկարժեք բույսերից ողետք ե հիշել կառուչուկաբեր և բուծիչ բույսերը: Մեր յերկրամասում կառուչուկաբեր բույսերը գտնվել են Խորհրդային իշխանության որոք: Բացի կառուչուկաբեր բույսի տեղական տեսակից, յերկրամասի փորձնական դաշտում մշակվում են նաև ԽՍՀՄ-ի զանազան վայրերում և արտասահմանում պատահող տեսակները:

Մեր յերկրամասի ամենաարևելյան ույոնները և Դադաստանի հյուսիսային մասը ծածկված են աղ պարունակող և ավագոտ հողով: Աղ պարունակող հողերը ծծված են աղով: Նրանք աղքատ են սեահողից և համարյա անպետք են իերկրագործության համար:

Դուն, Կուրան և Թերեմ գետերի գետաբերանների ընդարձակ տարածությունները բոնված են ցածրիկ գետակղղիներով: Մինչև այժմ այդ գետակղղիները մորեխի և մայլարի (ջերմ) հիվանդությունը տարածող մոծակների բույնն ելին հանդիսանում: Այժմ այդ գետակղղիները չորացվում են և արգավանդ հողամասեր դառնում: Սաեղծված ե հատուկ կաղմակերպություն «Պլավարոյ», վորը չորացնում ե այդ գետակղղիները՝ ջրանցքներ և առուներ փորելու միջոցով: Այդ առուներով ավելորդ ջուրը գնում, թափվում ե գե-

տերը կամ չորային, ջրազուրկ ույոնները: Չորացված տեղերում կազմակերպվում են ուժեղ խորհտնտեսություններ և կոլտնտեսություններ: ԱՇԽԱՏԱՆՔ

Բնագիտության զամերին եկակուրսիա կատարեցեք դեպի ձեր գյուղի կամ ստանիցի շրջակայքը:

Դիտեցեք մերձակա տուների, դետի թեք ափերի հողը:

Նկարեցեք հողի ուղղահայաց կտրվածքը:

Կտրեցեք հողի զանազան տեսակների նմուշների ձևով, տեղափորեցեք արկղներում համապատասխան գրություններով:

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մեր յերկրամասի կեսից ավելին պատկանում ե տափաստանային շերտին:

Տափաստանների բուսականությունը կախված ե հողի կազմությունից և անձրևներից:

Սրեմտյան տափաստանային մասում Մե և Ազովյան ծովերի մոտ մենք ունենք հարուստ, խիտ և հյութալի տափաստանային բուսականություն: Այստեղ դաշտերում բացի ցորենից համար են նաև մի շարք տեխնիկական մշակույթներ:

Կառուչուկաբեր բույսը ներկայիս մեծ դեր է խաղում ժողովրդական տնտեսության մեջ: Նա աղատում է մեզ արտասահմանից ամեն տարի կառուչուկ բերելու անհրաժեշտությունից և դրա համար մեծ գումարներ վճարելուց: Կառուչուկը հարկավոր է մեզ ավտոմոբիլների շիներ, կրկնակոշիկներ, վերնազգեստներ և այլ իրեր սրադրող արդյունաբերության համար: Բուծիչ բույսերից տարածված են մարգարածաղիկը, կատվախոր (վալերիան), արջընկույզը և այլն:

Հյուսիսային կովկասի անմատչելի լեռներում և յեղեգներում վայրի կենդանիներ շատ սակավ են պատահում:

Տափաստաններում գերակուում են մանր կրծողներ՝ պնիսական, զերմանիկ և դաշտային մկները: Կան նաև՝ աղվեսներ, նապասակներ և զայեր: Անտառներում պատահում են՝ վարագներ, արցեր, օնագայլեր, կզաքիսներ, վայրի վոչխարներ, լուսաններ և այլն.

ԱՇԽԱՏԱՆՔ.

Բնագիտության դասերին զուգընթաց կազմեցեք ձեր ույոնում գտնվող խոտերի, կուլտուրական և բուծիչ բույսերի և ծառերի ցուցակը:


ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ՈԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՂՆԵՐԸ

Մեր յերկրամասում կան շատ բազմատեսակ ոգտակար հանածոներ: Նրանց պաշտամ բավականաչափ ուսումնամասիրված ե և ունի արդյունաբերական մեծ նշանակություն: Դրանք հետեւյալներն են՝ բարածի, նավի, ցինկի և արենի հանքաները և ցեսնես և այլ շինանյութեր ունեցող վայրերը:

Մնացած ոգտակար հանածոների տեղերը դեռ լավ չեն ուսումնամասիրված և դեռ չեն մշակվում:

Շախտի ույոնում գտնված են մեծ տարածության վրա ածխաշերտեր:

Քարածուխ հանելու համար հողի մեջ փորում են մեծ և խոր ածխահողեր: Այդտեղից ամեն որ հանում են տասնյակ հազարավոր տոնն քարածուխ—անտրացիտ: Քարածուխը գործ է ածվում մեր յերկրամասի և ԽՍՀՄ-ի ուրիշ ռայոնների՝ ֆաբրիկների, գործարանների, շոգեկառքերի, շոգենավերի, ելեկտրակայանների և բնակչության կարիքների համար: Քարածիի մանրուցքը, փոշին գործ է ածվում գըրխավորապես ելեկտրակայաններում եժան ելեկտրական եներգիա ստանալու համար:



Նկ. 48 Նավթի շատրվան

Քարածիի զանգվածներ են գտնված նաև հարավում, կարաչայան ավտոնոմ մարզի լեռների մոտերքը:

Յերկրամասի գլխավոր բնական հարստությունն ե կազմում նավթը: Նավթ կա նաև Մայկրոպի ռայոնում: Վերջերս նավթ ե գտնված նաև Դաղստանի ավտոնոմ հանրապետության մեջ:


Նավթից նավթաթոր գործարաններում ստանում են՝ քարյուղ. բենզին, խելու յուղ, պարավին և այլն: Այդ բոլոր նավթամթերքները հարկավոր են ինչպես արդյունաբերության, այնպես ել գյուղատնտեսության համար: Մեծ քանակությամբ նավթ և նավթամթերք ե պահանջվում ավտոմոբիլների, տրակտորների, ինքնաթիռների համար:

Մեր յերկրամասի նավթը գործ է ածվում վոչ միայն ԽՍՀՄ-ի ներսում, այլ և արտահանվում ե արտասահման: Նավթատար խողովակների միջով նավթը հոսում ե Գրոզնիից Տուափսե, ուր վերամշակվում ե գործարաններում և արտահանվում կապիտալիստական յերկրները. փոխարենը բերվում են այնտեղից մեքենաներ մեր նորակառույցների համար:

Գրոզնիյ—Մախաչկալանավթատարովնավթը գնում, թափվում ե բենատար նավերի մեջ, վորոնք կասպից ծովով և Վոլգա գետով փոխադրում են ԽՍՀՄ-ի կենտրոնական ռայոնները:


1932 թ. գարնան ավարտված ե Արմավիրց Ռէկրայինա տանող նավթատարը, վորի միջով հոսելու յենավթը Ռէկրայինայում աշխատող տրակտորների համար:

Մեր յերկրամասի լեռներում կան զանազան տեսակի մետաղներ: Հյուսիս-Ռուբի մարզը հարուստ է արծաթի, կապարի և ցինիքի հանքերով: Նույնպես կան հանքեր կապարի մեջ ու այլներում մարգարիտի հանքերում:



Նկ. 49. Նավթատարի սիեման

Սկ ծովյան ափերին, գլխավորապես Նովոռոսիյսկ քաղաքի մոտերքում են ցեմենտի վերգելի (կրախառն հող) ամբողջ լեռներ: Մերգելն աղացվում է, ապա այրվում ցեմենտի գործար անների հատուկ հողմներում:



Նկ. 50 Նովոռոսիյսկի ցեմենտի գործարանը

Այստեղից ցեմենտը գնում է մեր յերկրամասի բոլոր ծայրերը և ԽՍՀՄ-ի նոր ելեկտրակայանների, գործարանների, բնակարանների շինարարության համար:

Յերկրամասի շատ ռայոններում կան զանազան շինանյութերի շերտեր՝ ավագ, քար, կավ, գան, կալին և այլն:

Լեռների խորքերից զետնի մակերեսութիւնի վրա յեն դուրս գալիս բազմաթիվ տաք և պաղ հանքային աղբյուրներ: Այդ աղբյուրների ջրերը հայտնի են ամբողջ Միության մեջ և ողտագործվում են աշխատավորության բըժշկվելու համար: Առանձնապես հայտնի յեն՝ Նարզան, Յեսենտուլի և Մացեստի (Սոչիի մոտ) ջրերը:

Այսպիսով մեր յերկրամասը հարուստ է շատ արժեքավոր հանածոներով: Բայց և այնպես մենք գեռ ճիշտ չգիտենք մեր բոլոր հարստությունները: Շատը գեռ չի ուսումնասիրված, կամ ուսումնասիրված ե քիչ: Միայն Խորհրդային իշխանության ժամանակ ե սկսված յերկրամասի հարստությունների խսկական ուսումնասիրությունը և նրանց ողտագործումը: Ամեն մի աշակերտ մասնակցի յերկրամասի ուսումնասիրությանը, սկսած իր բնակավայրից մասնակցի յերկրամասի ուսումնասիրությանը, սկսած իր բնակավայրից: Ամեն մի զպրոց կարող ե ոգնել մեր շինարարությանը, կազմակերպելով բնական հարստությունները հայտաբերելու համար զպրոցականներին և տեղական բնակչությանը:

Բնագիտության դասերին զուգընթաց հավաքեցեք ձեր գյուղի կամ քաղաքի շրջակայքում լեռնային տեսակների նմուշները և նրանցից կոլեկցիա կազմեք:

Խմբակներ կազմեցեք ձեր ռայոնի բնական հարստություններն ուսումնասիրելու համար:

Եկակիւրսիաներ կազմակերպեցեք դեպի տեղական ողտակար հանածոների վայրերը և նկարագրեցեք ձեր տեսածքը:

Նկարագրեցեք, թե ինչպես են ողտագործվում ձեր ռայոնում արդյունահանվող ողտակար հանածոները:

Յարական կառավարության ժամանակ Հ. Կովկասի բոլոր հարստությունները չելին կարող ոգտագործվել: Նրանք մնում ելին գետնի տակ, իբրև մեռած կապիտալ—գանձ, կամ մշակում ելին շատ թույլ կերպով: Այդ պատճառով մեր յերկրամասի արդյունաբերությունը մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը շատ զանդաղ եր զարգանում: Միայն Խորհրդային իշխանությունն սկսեց կանոնավոր կերպով ոգտագործել յերկրամասի բազմատեսակ հարստությունները:

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, Հ. Կովկասի բանվոր դասակարգը վոչ միայն վերաշնեց պատերազմի տարիներին ավերված հին արդյունաբերությունն ու տրանսպորտը, այլ և կառուցեց սոցիալիստական նոր, հզոր արդյունաբերություն:

Նոր տեխնիկան պահանջում է ավելի ու ավելի ելեկտրական եներգիա: Ելեկտրականությունն ստանալու համար մեր յերկրամասն ունի բոլոր աղբյուրները:

«Սպիտակ ածուխ» կամ ջրի ույժ, բարածխի մանրուց, նավթի մեացորդներ—այդ բոլորը մեզ մոտ գտնվում են մեծ քանակությամբ:

Շախտի ռայոնում առաջին հնգամյակում կառուցված ե Արտեմի անվան հոգու ելեկտրակայտնը, վորոն աշխատում ե քարածխի մանրուցքով:

Այդ ելեկտրակայտնի եժան եներգիան գնում է ածխահանքերը, Ռոստովի և Տագանրովի գործարանները:

Գրոզնիյ, Կրասնոդար, Նովորոսիյսկի քաղաքներում կառուցված են ռայոնական ելեկտրակայտներ, վորոնք աշխատում են նավթի և մաղութի մացորդներով:

Մեր յերկրամասի լեռնային գետերը միայն Խորհրդային իշխանության ժամանակ են սկսում ոգտագործվել, վորպես ելեկտրական եներգիայի եժան աղբյուր: 1932 թվին գործարկվում են ջրով աշխատող յերկու հզոր ելեկտրակայտներ, մեկը Կարաբահին-Բալկարյան մարզում, Բակսան գետի վրա՝ «Բակսանստրոյ» և մյուսը—Հյուսիս-Ռուսիան մարզում, Գիգել-Դոն գետի վրա՝ «Գիգելստրոյ»:

ԱՇԽԱՏԱՆՔ


Գտեք Հյուսիսային կովկասի քարտեզի վրա բոլոր խոշոր ելեկտրակայտները և նշանակեցեք յեղագծային քարտեզների վրա:

Առաջին հնգամյակում մեր յերկրամասում կառուցվում են մի շարք խոշոր ֆաբրիկներ և գործարաններ:

Հ. Կովկասի և ԽՍՀՄ-ի ուրիշ ռայոնների գյուղատնտեսության համար պահանջվում են մեծ քանակությամբ գյուղատնտեսական մեքենաներ: Այդպիսի մեքենաներ այժմ արտադրում ե գյուղատնտեսական մեքենաների գործարան՝ Սելվաը, վորը գտնվում է Ռոստովում, Դոնի վրա: Սելմաշը չի կարելի մինչև անգամ հասարակ գործարան անվանել դա ամբողջ տասը գործարան ե, վոր արտադրում ե՝ Տրակուր, Տանիչներ, Խնձիչներ, Խրձկալիչներ, ձիու փոցիներ, զյուղացիական այլերի անիվներ իրենց առանցքներով: Ամեն որ այդ գործարանը բաց ե թողնում մոտ 100 վագոն գյուղատնտեսական մեքենաներ: Յարական Ռուսաստանի այդպիսի մեքենաներ արտադրող բոլոր գործարանները միասին, տալիս ելին միայն Սելմաշի տվածի հազիվ յերրորդ մասը: Իր սարքավորումով և մեծությամբ Սելմաշը համարվում է աշխարհի ամենամեծ գործարաններից մեկը և գյուղատնտեսական մեքենաների տրատղությամբ՝ առաջինը Յելլուլայում:

Սելմաշին կից 1932 թվի սկզբին կառուցված ե կոմբայնների հզոր ցեխը: Դա տարեկան տալու յե 10000 հատ գյուղատնտեսական ամենաբարդ մեքենաներ՝ Կոմբայններ:

Կոմբայնը—դա անիվների վրա գտնվող մի ամբողջ ֆաբրիկ է դաշտում: Նա միաժամանակ և հնձում ե, և կալսում, և երնում ու պատրաստի հատիկները



Նկ. 51 Սելմաշ

տոպրակների մեջ լցնում: Կոմբայնի վրա աշխատող ամեն մի բանվոր փոխարինում ե դաշտում ձեռքի գործիքներով աշխատող 100 բանվորի:

Մենք արդեն ասացինք, վոր Գրոզնիի նավթի արդյունաբերության վայրում կառուցված են նավթը վերամշակող խոշոր գործարաններ:

Կապիտալիստների ժամանակ նավթն արդյունահանվում եր ավագակաբար. անցքերի միջով գետնի տակից հանվում եր բաց գույլերով և ուղղակի թափվում հատուկ փորած փոսերի մեջ: Նավթը գորոշվանում եր. նրա ամենաարժեքավոր մասերը՝ բենզինը, նավթային գազերը ողն ելին ցնդում: Կապիտալիստների համար կարևոր եր, վորքան կարելի յե արագ և եժան նավթ ստանալ և կարճ ժամանակում ծախել: Ի՞նչ կարել ունեյին նրանք մեծ փողեր ծախսել մեքենաներ, յերկաթե ցիստերներ և պահամաններ շինելու համար:

Նրանց ի՞նչ գործն եր, վոր բանվորությունն աշխատում ե ամենաածանը պայմաններում տկոր և կիսաքաղց:


Ահա ինչպես ենկարագրում հին նավթահանքերը Մաքսիմ Գորկին.

«Սաստիկ շող եր, խեղդում եր հազը: Ինձ թունավորված ելի զգում: Թափառելով նավթահորերի նավթով ծծված վիշկաների անտառի միջով, տեսնում ելի կանաչավուն-սկ հեղուկի յուղային լճակները: Թվում եր, թե նրանք անհատակ են: Յեղ գետինը, և նրա վրա գտնվող ամեն ինչ, և մարդիկ ծածկված ելին մթագույն ճարպով. ամեն տեղ յերեկում ելին փտելու մասին հիշեցնող կանաչավուն լճակներ: Վոտքերի տակի ավազը չեր ձրթճրթում, այլ ծլածլպում եր:

Այդ առաջ եր: Այժմ, յերբ բանվորներն իրենց ձեռքն են առել նավթահանքերը, քշելով այնտեղից նրանց նախկին տերերին, դրությունը բոլորովին փոխվել ե:


Ահա թե Մաքսիմ Գորկին ինչպես ենկարագրում նավթահանքերը Խորհրդային իշխանության որով:

«Նավթահանքերի լայնածավալ հրապարակի վրայով շացունով սողում են յերկաթե փոկերը: Վիշկաներն զգալիորեն պակասել են, բայց ամեն տեղ ճոճվում են «Բողոմուկաներ» (այդպես են կոչվում նավթահանքերում նոր տեսակի ճոճվող պոմպերը), վորոնք առանց աղմուկի դուրս են ծծում նավթը գետնի խորքերից: Ճարպով ճածկված բանվորներ վոչ մի տեղ չեն յերեւմ: Զի լսվում առաջվա տերերի աղաղակն ու վոռնոցը»:



Նկ. 52 Նավթահանքեր

Շախտ քաղաքի մոտ առաջ ել յեղել ե քարածխի արդյունաբերություն: Կապիտալիստերի ժամանակ այստեղ ևս քարածուխ եր արդյունահանվում, սակայն ձեռքի աշխատանքով: Այդ պատճառով ոռւս ածխահատը հինգ անգամ պակաս եր արդյունահանում, քան ամերիկական ածխահատը: Առաջ ածխահորերում ածխահատը քանդում եր ածուխը բրիչներով: Ածուխը փոխադրում եյին վագոնիկներով՝ մարդկանց կամ ձիու միջոցով: Այժմ մեր ածխահորերը սարքավորված են ամերիկական ածխահորերից վոչ պակաս: Ածուխը հատվում ե ածխահատ մեքենաներով: Ածուխը փոխադրում են վոչ թե մարդիկ, այլ ելեկտրատարները: Ածխահատի ծանր աշխատանքը թեթևանում ե մեքենաների միջոցով: Ածխահատների համար կառուցված են նոր բնակարաններ, ակումբներ, ճաշարաններ, մանկամատրներ:



Նկ. 53 Ս.ծխահորում

Այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներում փակվում են ածխահորերը, նավթահորերը՝ գործարանները, ֆաբրիկները, մեղ մոտ արագ ածում են հսկա նորակառույցները:

Նրանց մոտ ածում ե գործազրկությունը, միլիոնավոր բանվորներ սովամահ են լինում, մեղ մոտ գործազրկությունը վերացած ե: Տարեց տարի ամրանում և լայնանում են ԽՍՀՄ-ի պրոլետարիատի շարքերը:

Դուք դիտեք, վոր մեքենաներ շինելու համար մեղ մետաղ ե հարկավոր:

Մեր յերկրամասում կայերկու մետաղաբյունաբերական գործարան, մեկը Տագանրովում, մյուսը Սուլինում: Նրանք յերկաթահանքերից թուջ, յերկաթ և պողպատ են հալեցնում:

Մեր յերկրամասը տալիս ե շատ գյուղատնտեսական մթերքներ: Բայց այդ բոլորը պետք ե վերամշակել: Գյուղատնտեսական զանազան արտադրանքների համար կառուցված են յուղ պատրաստելու, շաքարի, պահածոների, ծխախոտի, կաշվի գործարաններ և ֆաբրիկներ: ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի և աշխատավորության դրությունը բարելավելու համար մեծ ուշադրություն ե դարձնում այժմ հիմնարկությունների վրա: Դրանք պետք ե բարձրացնեն իրենց արտադրողականությունը և լավացնեն վորակը:

Գյուղատնտեսական մթերքները վերամշակող հիմնարկներից նշանավոր են պահածոների մի շարք գործարաններ և յեգիպատացորեն վերամշակող կոմբինատարը: Այդ կոմբինատը կառուցված ե առաջին հսկամակում չ. Ուսեթիայի մարզի հետևան կայարանում: Այդտեղ յեգիպատացորենից ստացվում ե՝ ույա, մեղր, յեգիպատացորենի շաբաթ, իսկ տականքները գործ են ածվում իբրև կերանասունների համար:

ԱՇԽԱՏԱՆՔ

Թվեցեք, ի՞նչ արդյունաբերական հիմնարկներ կան ձեր ուսունում: Իմացեք ձեր կոլտնտեսությունում ի՞նչպիսի մեքենաներ կան և վոր գործարաններից են ստացվել:

ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Մեր յերկրամասի գյուղատնտեսությունը մեծ նշանակություն ունի ամբողջ Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միության համար: 1931 թվին Հ. Կովկասը յերկրին սվեց 200 միլիոն փութ հատիկային արտադրանի յեւ 30 միլիոն փրից ստելի յուղաներմեր, կատարելով միաժամանակ տեխնիկական մշակույթների յեւ անասունների վերաբերյալ պլանը:

Այդ բոլոր հաջողություններին մենք հասել ենք շնորհիվ գյուղատնտեսության վերականուցման:

Իմացերալիստական և քաղաքացիական պատերազմներից հետո վերակառուցված մեր գյուղատնտեսությունը հսկամյակի սկզբին գեռ կազմում եր մանր, բաժան-բաժան տնտեսություն: Անհատական գյուղական տնտեսությունը հողի վատ մշակելու, պարարտանյութերի բացակայության, ինվենտարի և բանող անասնի թույլ ոգտագործման պատճառով քիչ արտադրողականություն ուներ: Նա զգալի կերպով հետ եր միում արդյունաբերության աճելու թափից:

Կուսակցություննու Խորհրդային իշխանությունը գյուղատնտեսության հսկամյա պլանում դրել են գյուղի վերակառուցման խնդիրը:


Անհատական, բաժան-բաժան տնտեսությունների փոխարեն մենք կազմակերպում ենք խոշոր կոլեկտիվ տնտեսություններ և դրա հիման վրա վերացնում ենք կուլակությունը, վորակ դասակարգ: 1931 թվի վերջին ԽՍՀՄ-ի գյուղական տնտեսությունների 62%-ը միացած ե կոլտնտեսությունները: Մեր յերկրամասի գյուղական տնտեսությունների ավելի քան 80%-ը կազմում են կոլտնտեսությունները:

Գյուղատնտեսության վերակառուցման գործում մեծ նշանակություն ունեն Մ. Տ. կայանները: 1932 թվի գարնան մեր յերկրամասում Մ. Տ. կայանների

թիվը հասցվում է 224-ի: Մ. Տ. կայաններից յուրաքանչյուրն ունի տրակտորներ, բերքահավաք մեքենաներ և ավտոմոբիլներ: Դրանք համատարած կողեկտիվացման և կուլակության՝ վորպես դասակարգի վերացման կարևորագույն հենակետներն են հանդիսանում:

Ամբողջ յերկրամասում ծավալվել է հասիկային, անասնաբուծական և հատուկ տեխնիկական մշակույթների կոլտնտեսությունների ցանցը: Խորհուտեսությունները՝ դրանք պետական խորհրդային տնտեսություններ են. նրանք կոլտնտեսությունների համար նոր սոցիալիստական տեխնիկայի և սոցիալիստական աշխատանքի դպրոց են հանդիսանում:

«Խորհուտեսություններն իրենց նոր տեխնիկայով յեվ ոգնությամբ շրջապատի գյուղացիության, իրենց չտեսնված տեխնիկան քափով, հանդիսանում են այն առաջատար ուժը, վորն ապահովեց գյուղացիական մասնաների շրջադարձը յեվ իրեցներուն դեպի կոլեկտիվացման նախապարհը»-ՍՏԱԼԻՆ:



Նկ. 54 «Գիգանտ» խորհենենեսությունը

Մեր յերկրամասի «Գիգանտ» խորհուտեսության մասին գիտեն Խորհրդային Միության բոլոր անկյուններում գտնվող բանվորները, զյուղացիները, դպրոցականները, պիոներները:

«Գիգանտը» գոված ե Սալսկի տափաստանների լայնարձակ հարթավայրերի, վրա, բռնելով հյուսիսից-հարավ 90 կիլոմետր և արևմուտքից-արևելք՝ 40 կիլոմետր տարածություն:

Վոչ մի բուրդուական յերկրում չկա այսպիսի մի խոշոր տնտեսություն, ինչպիսին ե՝ «Գիգանտ» խորհուտեսությունը: Ամերիկական կապիտալիստի ամենամեծ տնտեսությունն ուներ 20 հազար հեկտար ցանքա: Հատիկային խորհուտեսություն «Գիգանտ»-ը բռնում է 183 հազար հեկտար տարածություն:

«Գիգանտ» խորհուտեսությունը չի նմանում զյուղի կամ ստանիցի: Նրա հոգամասի վրայով յերթևեկում են ավտոմոբիլներ. դանդաղ շարժվում են տրակտորների և կոմբայնների շարքերը:

Հողի վրա խիտցցված են հեռագրային և հեռախոսային սյուները: Դաշտերում յերեսում են անիմսերի վրա գտնվող բանվորական տնակներ, արհեստանոցներ, նավթով ցիստերններ, փոստի բաժանմունք և լրագրի դաշտային խմբագրություն:

Խորհուտեսությունն ունի 1000 հոգի մշտական բանվոր: Բերքահավաքի ժամանակ դրանց թիվը հասցվում է 6000 հոգու:

Յերե մենք կազմակերպում եյինք «Գիգանտ» խորհուտեսությունը, բուրժուատիկան պետությունները փրփուրը բերաններին դուռը եյին՝ «Ճեղքնառը», հատաշաւիք...»: Նրանք պնդում եյին, վոր մեր տեխնիկայով, մեր

բանվորներով մենք չենք կարող կանոնավոր կերպով այդպիսի խոշոր տնտեսություն կազմակերպել:

Հենց առաջին տարում խորհուտեսությունը ստացավ մեկ և կես միլիոն ուռելու ոգուտ: Մեկ հեկտարից ստացվեց 10 ցենտներ բերք, յերբ միաժամանակ հարևան անհատ տնտեսականներն ստացել եյին հեկտարից 5—6 ցենտներ: «Գիգանտ» խորհուտեսությունն առաջնորդում է շրջակայքի կողմանեսություններին:

Ամեն տարի նա ողնում է կոլտնտեսություններին, ցանելով և հավաքելով տասնյակ հազարավոր հեկտար տարածություններ:

Գյուղատնտեսության մեջ խորհուտեսություններն արտադրության սոցիալիստական կազմակերպման նմուշ են հանդիսանում: Նրանց որինակով կոլտնտեսությունները վարժվում են հողի մշակման ավելի լավ ձեմքերին, զյուղատնտեսության և տեխնիկայի բոլոր նվաճումների գործադրման:

Խորհուտեսությունները դարձել են հատիկների խոշոր ֆաբրիկներ:

Տարեց-տարի նրանք պետությանն ավելի և ավելի հաց են տալիս:

Մեծ նշանակություն են ստանում անասնաբուծական խորհուտեսությունները: Նրանք անասնաբուծական կոլտնտեսությունների ապրանքավայր ֆերմաների հետ միասին ապահովելու յեն Խորհրդային յերկիրը մսով, յուղով, կաթով: Անասնաբուծական խորհուտեսությունները մսի խնդիրը լուծելու հիմնական բազան են հանդիսանում:

Արեւելյան չորային ռայոններում կազմակերպված են անասնաբուծական խորհուտեսություններ: Կուբանի գետակղզիների վրա կազմակերպվում են՝ բրնձի, այգերուծական խորհուտեսություններ: Հարավային ռայոններում կառուցվում են՝ ծիսախոտի, բամբակի, խաղողի և ուրիշ խորհուտեսությունները մեծ դեր խաղացին մեր յերկրամասի զյուղատնտեսության կոլեկտիվացման գործում:

Ահա Ստալինի անվան (նախկին «Խուտորովկա») խորհուտեսության իր ռայոնի կոլեկտիվացման գործում ողնության որինակը.

Կոլտնտեսությունը ինվենտարի և քարշող ույժի մեծ կարիք ուներ: Կոլտնտեսության հողերը շատ եյին: Կուկաներն անհաջողություն եյին գուշակում: Բայց կոլտնտեսային տոկուն չքավորությունը վորոշեց մինչև վերջ պայքարել: Ոգնությունը խնդրեցին խորհուտեսությունից: Խորհուտեսությունն ուղարկեց իր տրակտորային խումբը:

Կոլտնտեսականները սպասում եյին այդ խմբին ամբողջ որը, բայց արդեն մթնում եր և խումբը չեր յերևում:

Կուլակներից կաշառված ստանիցի սրիկանների խումբը ծաղրում եր կոլտնտեսականներին.

—Չեն գալու ձեր գոված տրակտորները: Լեզուներդ քոր են գալիս, դրա համար ել խոսում եք տրակտորների ույժի մասին, վորը կոպեկ չարժի:

Յերեկոյան հանկարծ պարզեց, վոր տրակտորների խումբը գեռ առավարից կանգնած ե կամրջի մոտ, մյուս կողմում, ստանիցից 5 վերստ հեռավորության վրա: Կամուրջը քանդված եր, և տրակտորիստները զբաղված եյին ամբողջ որը նրա վերակառուցման գործով: Ինչպես հետո պարզեց, կամուրջը քանդված եր կուլակների կողմից, վորպեսզի տրակտորիստներին խանգարեն ողնության համանելու:

Իմանալով այդ մասին, կոլտնտեսականները և անհատական-չքավորները, զինվելով վորը մուրճով, վորը կացնով, գիշերով վազեցին կամրջի մոտ, ոգնելու տրակտորիստներին:

Գիշերվա ժամը 12-ին կամուրջը վերաշխված եր. խումբն ոգնության հասած իր ընկերների հետ միասին շարժվեց դեպի ստանիցը:

Չնայած ժամանակի ուշ լինելուն (գիշերվա ժամի 2-ը), խմբին դիմավորելու ելին դուրս յեկել հարյուրավոր գյուղացիներ:

Վաղ առավոտյան ամբողջ ստանիցի ներկայությամբ տրակտորներն ակոսում ելին կոլտնտեսային հողերը: Հետևյալ որն առտվատյան դեմ աշխատանքն ավարտված եր, և տրակտորների խումբը պատրաստվում եր վերադառնալու: Բայց անհատ տնտեսականների ամբոխը պաշարել եր բրիդադիրի խրճիթը, պահանջելով վոր խումբը մնա մի քանի որ ևս ամբողջ ստանիցի հողերը վարելու համար:

Խումբը մնաց հինգ որով. նրան ոգնության ելին ուղարկված խորհությունականից նոր տրակտորային խմբեր:

Խմբին ճանապարհելու ելին դուրս յեկել կոլտնտեսականներն իրենց նվագախմբով:

ԱՇԽԱՏԱՆՔ

Հյուսիսային կովկասի քարտեզի վրա գտեք «Գիդանո» խորհությունը:

Զեր ույոնում ինչպիսի խորհություններ և Մ.Տ. Կայաններ կան:

Մ.Տ. Կայանները կամ խորհությունները ինչ ոգնություն են ցույց տալիս ձեր կոլտնտեսությանը:

Թվեցեք, ի՞նչպիսի գյուղատնտեսական բույսեր են մշակվում ձեր ույոնում:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԽՍՀՄ-Ի ԱՅԼ ՌԱՅՈՒՆԵՐԻ ՀԵՏ

Հյուսիսային կովկասը արտադրում ե մի շարք մթերքներ վոչ միայն իր համար, այլ և ԽՍՀՄ-ի մյուս ույոնների համար: Դրա փոխարեն Հյուսիսային կովկասը ուրիշ տեղերից ստանում ե այնպիսի պիտույքներ, վորոնք այս տեղ կամ քիչ են և կամ բոլորովին չեն արտադրվում:

Մեր նավթը Գրողնիյից և Մայկոպից գնում ե ԽՍՀՄ-ի շատ ույոնները և հատկապես Արմավիր—Ռուգայինա նավթատար խողովակներով՝ Ռուգայինա:

Մրա փոխարեն մեր յերկրամասն ուրիշ արդիունաբերական ույոններից ստանում ե՝ ավտոմոբիլ, տրակտոր, շատ տեսակի կտորեղենն յեվ մարդարանային այլ արտադրանք:

ԽՍՀՄ-ի Յերկրապական մասի ֆաբրիկներն ու գործարանները մատակարարվում են Շախտի ույոնի ածխով: Հացն ուղարկվում ե Անդրկովկաս, Միջին-Ասիական հանրապետությունները, Կենտրոնական Սև-հողային մարդը, Լենինգրադի մարզը—հյուսիսային ույոնները:

Այդ զայրերից բերվում են՝ փայտեղեն, լուցի, բույր, շաբար, շորեղեն, կրկնականիկ, ամանեղեն յեվ այլ արտադրանք:

Այսպիսով մեր յերկրամասը սերտ կապված է Խորհրդային Միության ույոնների հետ, կապված է Միության վողջ տնտեսության հետ:

Հնդկամյակը չորս տարում կատարելով, մեր յերկրամասը ամբողջ Միության հնդկամյակն է կատարում: Նա, վորպես Միության կարևոր մասերից մեկը, իրագործում է սոցիալիզմի կառուցման գործը:

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՅԵՎ ԴԱՂՍՏԱՆԻ Ա.Խ.Ս. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հյուսիսային կովկասի ժողովրդական տնտեսության զարգացման մեջ աղգային մարզերն ու ինքնավար հանրապետությունը մեծ դեր են կատարում:

Յարական իշխանության ժամանակ այդ վայրերը տնտեսապես և կուլտուրապես շատ հետամնաց ելին: Բայց, շնորհիվ Լենինյան աղգային քաղաքականության միշտ գործադրման, յերկրամասի առաջավոր ույոնների բանվոր դասակարգի և աշխատավորության ոժանդակության, նրանց արդյունաբերությունն արագ զարգանում է, և նրանք անցնում են սոցիալիզմի կառուցման առաջին շարքերը:

Մեր յերկրամասի գյուղավոր հանածոները գտնվում են աղգային մարզերում: Այստեղ կա՝ նավթ, բարան, յերկար, գունավոր մետաղներ՝ «ըսպիտակ ածուլի» և շատ այլ հաղստություններ:

Այդ հարստությունների հիման վրա աղգային մարզերում և Դաղստանի հանրապետության մեջ հզոր արդյունաբերություն ե աճում: Առաջին և, մասնավանդ, յերկրորդ հնդկամյակում ելեկտրակայանների խիտ ցանց ե ստեղծվում: Այդ ելեկտրակայանները կողմեն հին արդյունաբերությունը վերակազմելու և նորագույն տեխնիկայի հիման վրա նորը կառուցելու:

Մի շարք ինքնավար հանրապետություններ՝ Աղքաղյան, Հյուսիսային Ռուսիան, Կաբարդին-Բալկարիան, Ջերմսիան—գյուղատնտեսության կոլեկտիվացման մեջ մեր յերկրամասի առաջավոր ույոններին հավասար հաջողություններ ունեն:

Գյուղատնտեսության մեջ բարելավվում ու զարգանում ե անասնապահությունը, առանձնապես՝ գյուղաբուծությունը: Զարգանում ե տեխնիկական բույսերի՝ բամբակի, բրնձի, կանեփի, ինչպես նաև՝ յեզիդացրենի, պտուղների, բանջարեղենի և կերախտեղենի մշակումը:

Լախանում ե խորհությունների և Մեքենա-տրակտորային կտանաբերի ցանցը:

Աղգային մարզերի համար մեծ նշանակություն ունի անտառալին ըրնեսությունը: Կառուցված են փայտամշակման մի շարք գործարաններ:

Դաղստանի հանրապետությունը, վորը վաղուց չե, ինչ մտել ե մեր յերկրամասի կազմի մեջ, մեծ նվաճումներ ունի սոցիալիստական շինարարության գործում:

Ավարտվում է Գերեզերիի լեռնային հիդրո-ելեկտրակայանը: Նախապահատական աշխատանքներ են տարվում յերկրորդ հնդկամյակում, Սուլակ գետի վրա հսկա հիդրո-ելեկտրակայան կառուցելու համար:

Դաղստանի հանքերը լայն կերպով ոգտագործվում են: «Դաղողնի» գործարանը մշակում է գետնից դուրս յեկող գազը, ծագալվում է նավթի արդյունանառությունը: Կառուցվել են ձուկ, բանջարեղեն, պտուղներ վերամշակող գործարաններ:

Ճանքատարածությունը մեծանում է: Անջրը հողերը ջրելով, ճահճները չորացնելով, մեծանում է ցանքատարածությունը: Կայունանում ե լայնանում են Դաղստանի կոլտնտեսություններն ու խորհությունները: Ավարտվում է լեռնային ույոնների չքավոր-միջակների անամնապահական և այգեգործական տնտեսությունների կոռպերացումը:

Վերաշինվում ու լայնացվում են յերկաթուղիներն ու խճուղիները, վորոնք պետք ե միացնեն ազգային մարզերն ու Դաղստանի հանրապետությունը յերկրամասի այլ ռայոնների հետ:

Յարական կառավարությունը լեռնցիներին հնարավորություն չեր տալիս դարդացնելու իրենց կուլտուրան, ընդհակառակը, վերջին դարոցներն ել փակում եր և արգելում մայրենի լեզվով դասավանդումը:

Լեռնցիների մեծ մասը չուներ իր տառերը, չուներ իր մայրենի լեզվով զրբերը:

Մինչեղափոխությունը այնպիսի մարզերում, ինչպիսին են՝ Խնդրուեթիյան, Կարաղին-Բալկարիան, Զեջնյան՝ ամեն մի 100 հոգուց յեղել ե մեկ կամ 2 հոգի գրագետ: Դրանք ել մոլլան, կալվածատերն ու կուլակն են յեղել:

Այժմ բոլոր ազգային մարզերում մացկած ե ընդհանուր ուսում: Տպվում են մայրենի լեզվով բազմաթիվ գրքեր ու թերթեր: Դարոցներում դասավանդումը կատարվում ե մայրենի լեզվով:

Աղքաբեյան, Հյուսիսային-Ռութիան, Կաբարդին-Բալկարիան դառել են համատարած գրագիտության մարզեր:

Լեռնցիները բանվոր դասակարգի ոժանդակությամբ ստեղծում են իրենց, ձևով ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական, կուլտուրան:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ ԱՌԱՋԱԴՐԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առաջին հնգամյակում Հյուսիսային կովկասը ԽՍՀՄ-ի այլ ռայոնների հետ միասին մեծ հաղթանակներ ունեցավ:

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, Հյուսիսային կովկասի աշխատավորությունը հաջողությամբ վերակառուցում ե յերկրամասի հետամնաց գյուղատնտեսությունը և գարձնում յերկրամասը ԽՍՀՄ-ի արդյունաբերական-գյուղատնտեսական գլխավոր ռայոններից մեկը: Գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը հիմնականում ավարտված ե և գրահիման վրա վերացված ե կուլակությունը, վորպես դասակարգ: Լայն կերպով ծավալվել ե խորհունտեսությունների կառուցումը: 224 մեքենա-տրակտորային կայանները հարյուրավոր տրակտորներով, կոմբայններով և գյուղատնտեսական այլ մեքենաներով հասցնում են կոլտնտեսություններն ավելի բարձր մակարդակի: 1931 թվին մեր յերկրամասում ԽՍՀՄ-ի փողջ ժողովրդական անտեսության հետ միասին ավարտվել ե սոցիալիզմի հիմքի կառուցումը: Շատ գործարաններ արդեն կատարել են իրենց հնգամյա պլանը: Նավթի արդյունաբերության հնգամյակն իրագործվել ե յերկու և կես տարում: Կառուցվել են հսկա գործարաններ, ինչպես՝ Ռուսականացը, Շախտի, Նավորոսույսեկի, Կրասնոդարի Ելեկտրակայանները: Ավարտվում են Կաբարդին-Բալկարիայում՝ Բակսան գետի վրա և Հյուսիսային-Ռութիայում՝ Գիզլի-Դոն գետի վրա կառուցվող Ելեկտրակայանները: Մեր յերկրամասը դարձել ե համատարած կոլեկտիվացման և համատարած գրագիտության յերկրամաս: Լայն ծավալ ե ստացել բանվորների և կոլտնտեսականների տեխնիկական կրթության գործը:

«Յերկրորդ հնգամյակի հիմնական բաղադրական խնդիրն ե՝ վերջնականացնել վերացնել կապիտալիստական տարրերն ու դասակարգերն ընդհանրապես» (17-րդ կուս, կոնֆերանսի բանաձեւից),

Յերկրորդ հնգամյակում մեր յերկրամասի արդյունաբերությունն ու դյուղատնտեսությունն ել ավելի պիտի բարձրանան ու զարգանան:

Նախագծված ե կառուցել մի շարք նոր Ելեկտրակայաններ, վորոնիք պիտի աշխատեն քարածխով, մազութով և գետերի ջրերի ուժով: Առանձնապես աչքի յերնելու Դաղստանի հանրապետության մեջ՝ Սուլակ գետի վրա կառուցվող Ելեկտրակայանը, վորը լենինգրադի մոտ գտնվող Վոլխովյան Ելեկտրակայանից վեց անգամ մեծ ե լինելու: Մի ուրիշ հզոր Ելեկտրակայան ել կառուցվելու յերգածխի հանքերի ռայոնում:

ԽՍՀՄ-ի նավթի արդյունաբերության արտադրանքի կեսը պիտի տա մեր յերկրամասը:

Յերկրորդ հնգամյակում մեծ չափերով պիտի զարգանան մեր յերկրամասի քարածխի արդյունահանությունը և քիմիական արդյունաբերությունը:

Մեքենաներ արտադրելու համար մեր յերկրամասը մեծաքանակ մետաղի կարիք ունի: Նախագծված ե յերկրորդ հնգամյակում կառուցել յերկու խոշոր մեքենագործական գործարան, դրանցից մեկը կառուցվելու յերգածխի ռայոնում՝ Հյուսիսային Պոնից գետի վրա և յերկաթ-հումույթը ջրային եժան ճանապարհով ստանալու յերշից, իսկ մյուսը՝ Կաբարդին-Բալկարյան ինինավար Արգում-յերկաթահանքերի շրջանում:

Մննդի և համի արդյունաբերությունը պիտի հասնի այնպիսի զարգացման, վոր կարողանա վերամշակել յերկրամասի գյուղատնտեսական արտադրանքը:

Մեր յերկրամասի ժողովրդական անտեսության հետագա զարգացումը դանդաղեցնում է հաղորդակցության ճանապարհների անբավարար լինելը: Այդպակասն առանձնապես զգացվում է ազգային մարզերում: Նախագծված ե մեծ աշխատանքներ կատարել յերկաթուղարյան ճանապարհների և խճուղիների շինարարության գծով, ինչպես նաև ջրային տրանսպորտը բարելավելու ուղղությամբ:

Յերկրոբդ հնգամյակում պիտի կառուցվեն մեր յերկրամասը ուրիշ ուղղությունների հետ կապող նոր յերկաթուղիներ: Դրանցից ե լինելու, որինակ, Կովկասյան լեռնաշղթայի միջով Հ. Կովկասը Ս. Յորեկովկասի հետ: Կապող յերկարուղագիծը: Նախագծվում է կառուցել Վանիջի ջրանցքը, վորը պիտի միացնի Կասպից ծովը Ս. Գովյան և Խել ծովերի հետ:

Մեր յերկրամասի գյուղատնտեսության հիմնական խնդիրը յերկրորդ հնգամյակում լինելու յերկարացությունների կազմակերպչական-տնտեսական ամրացումը, մեր կոլտնտեսությունների և խորհունտեսությունների աշխատանքի վորակի, ինչպես նաև բերքատվության բարձրացումը: Մեր յերկրամասը պիտի ունենա այնպիսի բարձր բերքատվություն, վոր կարողանանք յերկու անգամ ավելի բերք հավաքել, քան ստացել ենք 1931 թվին:

Անասնապահության ուղղությամբ մեր կոլտնտեսությունների և խորհունտեսությունների առաջ խնդիր ե դրված ավելացնել անսառների քանակը և բոլոր հասարակ տեսակի անսառները փոխարինել ազնվացեղ անսառներով ու շատ և լավ արտադրանք ստանալ:

Այս միջոցառությունների հետևանքով Հյուսիսային Կովկասն ել ավելի կամրապնդի իր արդյունաբերությունը և զրա հիման վր նաև գյուղատնտեսությունը:

Անում ու բարելավվում է բանվոր դասակարգի և աշխատավորության նյութական դրությունը:

Ամբողջ ԽՍՀՄ-ի հետ միասին մեր յերկրամասը կիրագործի 17-րդ կուսկոնքերանսի առաջադրած խնդիրները, այն ե՛ վերջնականապես վերացնել կապիտալիստական swarrերն ու դասակարգերն ընդհանրապես յեվ սոցիալիզմ կառուցել:



ՀԱՅԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Դասագրքիս (հավելված) Հյուսիսային կով-
կասի բարեզզը մամուլի տակ ե. լույս տեսնե-
լուն պես կուղարկվի բնըեցզներին ձրե-

Հրատարակչ. «ՀՅՈՒՍԻՍԱՑԻՆ ԿՈՎԿԱՍ»

ԱՊՎԱՆԴԱՎԱՐՈՒԹ-ՅՈՒՆ

Հորիզոնը	և	նըա	կողմերը	3				
Ինչպես	են	ոգտվում	կօդմացույցով	7				
Պլան	.	.	.	8				
Զոր	և	հովիտ	.	10				
Դաշտավայրեր	և	լեռներ	.	11				
Ստորերկրյա	ջրեր	.	.	15				
Աղբյուրներ	.	.	.	16				
Արտեզյան	ջրհորներ	.	.	17				
Առվակներ	և	գետեր	.	18				
Տափաստանային	և	լեռնային	գետեր	19				
Լճակ	և	լիճ	.	20				
Ծանոթություն	քարտեզի	հետ	.	21				
Յերկրագունդ	.	.	.	23				
Յերկրի	որական	պառույտը	.	26				
Աստիճանացանց	.	.	.	27				
Ցամաքի	և	ջրի	դասավորումը	յերկրի	մակերևույթի	վրա	28	
Կլիմայական	դուտիներ	.	.	28				
Տաք	գոտու	յերկրները	.	30				
Կենորոնական	Աֆրիկայում	.	.	31				
Մարդիկ	վորսալն	Աֆրիկայում	.	33				
Հնդիկների	կյանքը	.	.	34				
Տունդրա	.	.	.	34				
Տունդրայի	բնակչությունը	և	նըա	զբաղմունքը	36			
Ցարական	հյուսիսն	ու	Խորհրդային	հյուսիսը	36			
Բարեխառն	գոտու	յերկրները	.	38				
Ինչպես	ե	ապրում	աշխատավորությունը	մեր	յերկրամասում	39		
Մեր	յերկրամասի	ուայնացումը	.	42				
Յերկրամասի	բնությունը	.	.	44				
Հյուսիսային	Կովկասի	մակերևույթը	.	45				
Կլիման	.	.	.	46				
Հողը	.	.	.	47				
Բուսականությունը	և	կենդանական	աշխարհը	49				
Յերկրամասի	ոգտակար	հանածոները	.	49				
Յերկրամասի	գյուղատնտեսությունը	.	.	55				
Հյուսիսային	Կովկասի	տնտեսական	կապերը	ԽՍՀՄ-ի	այլ	ուայնների	հետ	58
Սոցիալիզմի	կառուցումը	ազգային	մարզերում	և	Դաշտանի	ԱԽՍ	հանրապետու-	.
թյան	մեջ	.	.	59				
Հյուս.	Կովկասի	առաջին	հնգամյակի	արդյունքներն	ու	յերկրորդ	հնգամյակում	.
առաջադրած	խնդիրները	.	.	60				



Отв. редактор
А. Г. Авакян
Техн. редактор
Г. М. Маркарьян

2566
Р-У-4

Сдано в наб. 26/VI 1932 г.
Сдано в печ. 20/VII 1932 г.
Об'ем 4 печ. листа
Тираж 9125 экз.

Հայաստանի Ազգային գրադարան



NL0420184

20763

Գիւс 35 գոր
цена 35 коп.

30412

1

2

37

На армянском языке

Симонов, Федоров, Чернов

РАБОЧАЯ КНИГА по ГЕОГРАФИИ
для 3-го года обучения

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԴԱՐԱՆԸ

ԽԱՍՏԱԿ-ԴՈՒ, ՄՈԽՈՎՅԱ ՓՈՂ, 53

ԳՐԱԿԵՆՈՒՆ (ԿՆԿՈՑԵՆՏՐ)